

3231

26 SEP 2006

S-99

ՊՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՈՑԵՐ

15 JAN 2010

uf

Ի. Տ Ր Ա Յ Ն Ի Ն

Խ Ս Հ Մ
 Ժ Ո Ղ Ո Վ Ո Ի Ր Դ Ն Ե Ր Ի
 Յ Ե Ղ Բ Ա Յ Ր Ա Կ Ա Ն
 Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ը

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
 ԲԱՂԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
 ՅԵՐԵՎԱՆ ● 1988

16731

24 AUG 2013

Պատրաստված է հրատարակության
ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի
Իրավունքի Ինստիտուտի կողմից
(գիտական—հանրամատչելի սերիա)



1173
38

«Մենք այժմ ունենք լիովին կազմավորված և բոլոր փորձություններին դիմացած սոցիալիստական բազմազգ պետություն, վորի ամրությանը կարող եր նախանձել ուզածդ ազգային պետություն ուզածդ աշխարհամասում»:

Ի. ՍՏԱԼԻՆ

И. ТРАЙНИН
БРАТСКОЕ СОДРУЖЕСТВО
НАРОДОВ СССР

Армгиз—Издательство
политической литературы
Ереван, 1938

ՅԱՐԱԿԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆՏ

Մեր յերկիրը մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակը Ռուսական կայսրությունն էր կոչվում: Նրանում տիրապետում էին կալվածատերերն ու կապիտալիստները ցարի դիկտատուրայով: Տիրապետող դասակարգերի շահագործական քաղաքականությունն առանձնապես կոպիտ ու անպատկառ կերպով անց էր կացվում ծայրերկրներում, վորոնք բնակված էին բազմաթիվ վոչ-ռուս ազգություններով: Այս ազգությունների բողոքներն ընդդեմ ցարիզմի, կալվածատերերի և կապիտալիստների ճնշումների խեղդվում էին ամենամոտոք յեղանակով:

Բանվոր դասակարգի և ազգային-ազատագրական շարժումների դեմ մղած կռիվում ցարական կառավարությունը չէր կանգ առնում վոչ մի միջոցի առաջ: Զգտելով հեռացնել իրենից ժողովրդի դայրույթը և խանգարել հեղափոխական ուժերի միավորմանը, ցարական կառավարությունը բորբոքում էր ռուսական ու ազգային թշնամանքը, թուրքերի և հայերի, ուղբեկների և թուրքմենների միջև կոտորած էր սարքում, հրեաների ջարդեր էր կազմակերպում և այլն:

Կառավարությունը ծայրերկրների ազգություններին դրկում էր քաղաքական իրավունքներից: 1907 թվի հունիսի 3-ի ցարական որենքն ասում էր.

«Ռուսական պետության ամբաստան համար ստեղծված Պետական դուման ըստ իր վոգու պիտի լինի ռուսական: Մեր տերություն մեջ մտնող այլ ժո-

զովուրդները պետք է իրենց կարիքների ներկայացուցիչներ ունենան, բայց չպիտի լինեն և չեն ել լինի այնքան թվով, վոր նրանց հնարավորութուն տա զուտ ուսսական հարցերի տնորինող լինել: Իսկ պետութեան այն ծայրերկրներում, վորտեղ բնակչութունը չի հասել քաղաքացիութեան բավականաչափ զարգացման, Պետական դումայի ընտրութունները պետք է ժամանակավորապես դադարեցվեն»:

Այս որենքի հիման վրա ընտրական իրավունքից զրկված էլին Միջին Ասիայի, Ղազախստանի, Յակուտիայի բազմաթիվ ժողովուրդները: 1914 թ. փետրվարի 11-ին ցարական մինիստր Մակլակովը ընտրական իրավունքներ տալու մասին արված միջնորդութեանը պատասխան տվեց Ղազախստանի ներկայացուցիչներին, թե զազախական մարզերի «բազմացեղ բնակչութունը այժմ չի կարող դեռ բավականաչափ նախապատրաստված համարվել»:

Յարական կայսրութունը լենինը անվանել է «ժողովուրդների բանտ»: Նրա բանտապետները ցարիզմի դինավորական-վոստիկանական չինովնիկներն էլին, վորոնք հենվում էլին շահագործող դասակարգերի վրա ու Ռուսաստանի ժողովուրդներին անողոք ճնշման մեջ էլին պահում: Ահա՛ ինչու ցարիզմի և դասակարգային շահագործման դեմ բոլոր պայքարողները դրա հետ միասին պայքարում էլին նաև նրա ուղեկցի՝ ազգային հարածանքի դեմ:

Քաղաքական ճնշման հետ միասին ցարական կառավարութունը տնտեսական ճնշում էլ էր դործադրում, ազգութունները լայն մասսաներին աղքատութեան և քայքայման մատնելով:

Ծայրերկրների, մասնավորապես արևելյան ծայրերկրների, զաղութացումը ուղեկցվում էր բնիկներին բռնի կերպով վատթարադույն հողամասերը քչելով:

Ֆաչիկերիւում, Ղրիմում, Կովկասում, Միջին Ասիայում և ազգային այլ ռայոններում բնիկներին բռնի կերպով հանում էլին իրենց հողերից, քշում էլին սարերը և այլ անբնակ վայրերը: Ծայրերկրների աղքատութունը, սովահարութունը, բնակչութեան բժշկական սպասարկման բացակայութունը սոցիալական զանազան/հիվանդութունների (տուբերկուլյոզ, տրախոմա, սիֆիլիս և այլն) տարածման աղբյուր էլին ծառայում և տանում էլին դեպի առանձին ժողովուրդները բնաջնջումը: Նույն այդ ժամանակ յեկվոր, դաղութարար բնակչութունը ստանում էր լավագույն հողամասերը: Յարական կառավարութունը դրանով փորձում էր, նախ, ուսսական հողազուրկ և սակավահող դուռդացիներին հայացքը իրենց հայրենիքի կարվածատիրական հողերի վրայից հեռացնել, ապա ձգտում էր ծայրերկրներում ուսսական կուլակներից հենարան ստեղծել իր զաղութարարական ծրագրերն իրագործելու համար:

Ծայրերկրների տնտեսական զարգացումն արհեստականորեն կասեցվում էր: Յարական կառավարութունը թույլ չէր տալիս այնտեղ արդյունաբերական ձեռնարկութուններ հիմնել: Ծայրերկրները պետք է միայն գաղութային հումուլթի աղբյուրներ և վաճառահանման շուկաներ մնային կենտրոնի արդյունաբերութեան համար: Դրա հետևանքով, ծայրերկրներում, առանձնապես արևելյան ծայրերկրներում (հաղվադյուտ բացառութեամբ) բնիկներից շատ քիչ պրոլետարիատ կար և վորակյալ կադր համարյա չկար:

Քաղաքական և տնտեսական ճնշմանն ուղեկցում էր կուլտուրական ճնշումը: Իս արտահայտվում էր բռնի ուսսացման քաղաքականութեամբ, ազգային կուլտուրայի ճնշմամբ: Ծայրերկրների բնակչութեան ճնշումը

չող մեծամասնութիւնը անգրագետ եր, իսկ շատ ժողովուրդներ անգամ իրենց գիրը չունենին:

Հեղափոխական շարժման դեմ մղած պայքարում, վտասիկանութեան և ժանդարմերիայի կողքին, ցարական կառավարութիւնը հենվում եր նաև տերտերներ Վրա, ծայրերկրներ ժողովուրդների մեջ բռնի կերպով ուղղափառութիւն տարածելով: Դա վոչ-ուս ազդութիւնների կողմից լայն դիմադրութեան եր հանգիւյում: Իսկ բոլոր կրօնների տերտերները ողտադրուծում եյին հետամնաց մասսաների կրօնական նախապաշարմունքները, ուժեղացնելով թշնամանքն ու ընդհարումները ժողովուրդների միջև:

Ռուսաստանի ազդութիւններն ել ավելի ստրկացնելու նպատակով ցարական կառավարութիւնը հաճախ զիջումներ եր անում աղբային տերտերութեանը: Որինակ, ուկրաինական լեզվով աշխարհական գրքերի հրատարակութեանն արգելելով, ցարական կառավարութիւնը 1905 թվի ապրիլին, հեղափոխական շարժման վերելքի պահին, վորոչեց. «վերացնել այն սահմանափակող միջոցները, վոր հաստատված են սուրբ գիրքը մարտոսական լեզվով հրատարակելու վերաբերմամբ, այն պայմանով սակայն, վոր ամեն մի այսպիսի հրատարակման համար հայցվի սրբազնագուշն Սինոդի որհնութիւնը»¹:

Կապիտալիստական հարաբերութիւններ զարգացումը ծայրերկրներում աստիճանաբար սեփական բնիկ հողատիրական ու առևտրա-վաճառուական բուրժուազիա ստեղծեց: Դա ուժեղացրեց աշխատավորների լայն մասսաների կրկնակի շահագործումը: Աղբութիւնների աշխատավորները մի կողմից ճգմված եյին ցարական կառավարութեան և նրա տեղական դոր-

ծակալների մեծապետական և խմբերիալիստական ճընժամբ: Մյուս կողմից նրանց ճգմել եր ստրկական կախումն «իրենց» շահագործողներից՝ բայերից, մանապաներից և վաճառուներից Միջին Ասիայում և Ղազախստանում, իշխաններից և կալվածատերերից Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում, կալվածատերերից և կապիտալիստներից Լեհաստանում, Ուկրաինայում և այլն:

Շահագործող այս խավերի վրա ել հենց հենվում եր ցարիզմը ծայրերկրների ժողովուրդներին ճնշելու ընթացքում:

Յարական Ռուսաստանի պատմութիւնը ստրկացված ազդութիւնների բաղմաթիվ ապստամբութիւններ գրտե ընդդեմ բարբարոսական ճնշման: Այս ազդութիւնների լայն մասսաները հաճախ եյին միանում ուսական գյուղացիների այն ապստամբութիւններին, վորոնք ուղղված եյին ցարի և կալվածատերերի դեմ: Այսպես յեղավ, որինակ, XVII դարում Ռազինի և XVIII դարում Պուգաչովի գյուղացիական ապստամբութիւնների ժամանակ: Թաթարները, բաշկիրները, չուվաշները, զազախները և անդրվոլգյան այլ ժողովուրդները այդ և հետագա ապստամբութիւններում ամենաակտիվ մասնակցութիւն ունեցան:

Ռուսական բանվոր դասակարգի պայքարն ընդդեմ ցարիզմի լայն արձագանգ եր գտնում ծայրերկրներում: Աղբային ծայրերկրների աշխատավոր մասսաները ուսական պրոլետարիատին ձեռք ձեռքի տված դուրս եյին դալիս ցարիզմի, կալվածատերերի և կապիտալիստների դեմ, աղբային հալածանքի և ջարդերի դեմ: Կոխված դասակարգային մարտերում, դաստիարակված և ղեկավարված Լենինի—Ստալինի կուսակցութեան կողմից, ուսական պրոլետարիատն իր շուրջն եր համախմբում ճնշված ազդութիւնների

¹ Собр. узак. № 58, 8 апреля 1905 г., стр. 488.

աշխատավորներին և նրանց գրոհի յեր տանում ընդդեմ
ցարեղմի և շահագործման ու ազգային ճնշման ամ-
բողջ սիստեմի:

Յարեղմի և անկեղծի և շովինիստական քաղաքա-
կանությունն ուժեղանում եր իմպերիալիստական
պատերազմի մոտեցմանը զուգընթաց: Բանվորական
շարժման վերելքին, 1910—1912 թվերին, կառավարու-
թյունը պատասխանեց ճնշումների ուժեղացմամբ,
բանվորների զազանային զնդակահարմամբ և ենայում
1912 թ. ապրիլի 4 (17)—ին և Բեյլիսի¹ պրովոկացիոն
գործով, վորի նպատակը յերկրում ջարդարարական
շարժման նոր ալիք առաջ բերելն եր:

1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմն
ե և ավելի սրեց ազգային հարցը: Զինվորական ան-
շնորհք հրամանատարությունը ճակատում իր կրած
պարտությունների մեղքը հաճախ դցում եր մերձա-
կատային գոտու ճնշված ազգությունների վրա:
1916 թ. ցարական կառավարությունը արյունահեղ
դատաստան տեսալ ապստամբած զազախ ժողովրդի
հետ: Այս ապստամբությունը հզոր արձագանգ գտավ
անգրվուզյան և Միջին Ասիայի ժողովուրդների մեջ,
և հալածված ազգություններն ե' և ավելի սկսեցին
ատել ցարեղմին: Ամբողջ յերկրում ե' և ավելի ուժեղա-
ցավ վոստիկական տեոոյն ազգային ծայրերկրնե-
րում ապրող ժողովուրդների վերաբերմամբ:

Ազգային թշնամանք և ընդհարումներ բորբոքելով
կայսրության ժողովուրդների միջև, ցարեղմն արա-
գացնում եր իր սեփական կործանումը:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո
ստեղծված Ժամանակավոր բուրժուական կառավարու-

¹ Հրեա Բեյլիսի սուտ մեղադրանքի գործը, վոր իբր նա
սպանել ե քրիստոնյա յերեխայի սխուռալ (ձեռային) նպատակ-
ների համար:

թյունը չվոչնչացրեց և չեր ե և կարող վոչնչացնել
ազգերի ստրկացումն ու անհավասարությունը, քանի
վոր անխախտ եր մնացել ազգային ճնշման բազան՝
կապիտալիզմը: Ժամանակավոր կառավարությունը
ձեւափոխեց միայն ազգային ճնշման ձեւերը, դա ավելի
նրբին դարձնելով: Դա մի շարք սուր կոնֆլիկտներ
առաջ բերեց Ֆինլանդիայի և Ուկրաինայի հետ: Յա-
րեղմի քաղաքականությունը շարունակելով, Ժամանա-
կավոր կառավարությունը ձգտում եր նոր տերիտո-
րիաներ նվաճել, սպա ուրեմն նաև նոր ժողովուրդներ
հպատակեցնել: Ժամանակավոր կառավարությունը
չհրաժարվեց ուսսական իմպերիալիզմի պահանջներից
Մերձավոր Արևելքում (Կ. Պոլիսը, նեղուցները, Տաճ-
կահայաստանը գրավելու պլանները) և Արևմուտքում
(Ավստրիական Գալիցիան, Արևելյան Պրուսիան և
այլն):

Փայրերկրներում սկսեցին ստեղծվել բուրժուա-
կան «ազգային խորհուրդներ» (Ռադան՝ Ուկրաինա-
յում, կուրուլտայները՝ Ղրիմում, Բաշկիրիայում և
այլն): Այս «ազգային խորհուրդները» ղեկավարները
ոակարկում եյին Ժամանակավոր կառավարության
հետ իրենց այնպիսի ավելի լայն իրավունքներ տալու
մասին, վորոնք ուժեղացնեյին բուրժուազիայի դատա-
կարգային դիրքերը «իրենց» ժողովրդի մեջ: Նույն
այդ ազգային բուրժուազիան ուսսական բուրժուազիա-
յի և կալվածատերերի հետ միատեղ դեմ դուրս յեկավ
հեղափոխական պրոլետարիատին, վորը պահանջում
եր լուծել հեղափոխության այն արմատական հարցե-
րը, վորոնցում խիստ շահագրգռված եյին ամեն ազ-
գության ամենալայն մասսաները:

Բոլոր ժողովուրդների տիրապետող դասակարգե-
րը ամբողջ ուժով ձգտում եյին խանդարել ուսսական
բանվոր դասակարգի և Ռուսաստանի բոլոր ազգու-

թյունների աշխատավորների ավելի ու ավելի ամրապնդելու միությանը:

Հեղափոխական շարժման հարաճմանը զուգընթաց ազգային ծայրերկրների ժողովուրդների բուրժուազիան ուժեղացնում էր իր նացիոնալիստական ազդեցության, հանդես էր գալիս հեղափոխական Խուսափանից անջատվելու քարոզով, դրանով հենց ձգտելով պահպանել իր տիրապետող դրությունը:

Լենինի—Ստալինի կուսակցութայն առաջ դեպի Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը տանող ուղու վրա հոյակապ խնդիր էր կանդնած՝ միավորել բոլոր ազգությունների աշխատավորներին այն հաշվով, վոր ընդհանուր ջանքերով տասպալի կարվածատերերի և բուրժուազիայի իշխանությունը, հաստատվի բանվոր դասակարգի ղեկատարության, վորը վերջ կտա դասակարգային ու ազգային ճնշման:

ԼԵՆԻՆԻ — ՍՏԱԼԻՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅԲՍՐԸ ՀԱՆՈՒՆ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՎԱՍՐՈՒԹՅԱՆ

Լենինի—Ստալինի կուսակցությունը կառուցվեց և աճեց վորպես ամեն մի ազգային ճնշման անհաշտ թշնամի: Կուսակցությունն ապացուցում էր, թե ազգային ճնշման մեջ շահագրգռված են տիրապետող դասակարգերը՝ կարվածատերերը և կապիտալիստները և թե, ընդհակառակը, ամեն ազգի բանվոր դասակարգն ու աշխատավորները շահագրգռված են սերտ միության մեջ ընդհանուր դասակարգային նպատակների համար ընդդեմ բոլոր ազգերի շահագործողների:

Լենինը, դեռ մինչև կուսակցության ստեղծվելը, էր «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները»» վաղ (1894 թվի) աշխատության մեջ գրում էր, թե «ազգային ատելության դեմ կռվելու այլ միջոց չկա, քան ամեն մի առանձին յերկրում ճնշվածների դասակարգի կազմակերպումն ու համախմբումը ճնշողների դասակարգի դեմ կռվելու համար, քան այդպիսի ազգային բանվորական կազմակերպությունների միավորումը մեկ միջազգային բանվորական բանակի մեջ՝ միջազգային կապիտալի դեմ կռվելու համար»¹:

Ձեռնարկելով հեղափոխական ուժերի հավաքման և կազմակերպման, Լենինը հանձարեղ կերպով նախատեսում էր ուսական բանվոր դասակարգի պայքարի հեռանկարները: Ավարտելով իր «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» աշխատությունը, նա գրում էր.

1 Լենին, հ. I, էջ 74, հայ. հրատ., էջ 98:

«...Ռուսական բանվորը բոլոր դեմոկրատական տարրերի գլուխ անցնելով ու վտարի յեղնելով կտապալի արտոլուտիզմը և ուսու պրոլետարիատին (բանվոր յեղնելի պրոլետարիատի հետ կողք կողքի) կառավարողի բացառապես քաղաքական կովի ուղիղ անապարհով դեպի հաղթանակ և սոցիալական հեղափոխություն»¹:

Բուլճեիկների կուսակցութունը սպացուցում էր, վոր ազգային ճնշումն ամբողջովին վոջնչացնելու համար պետք է տապալել և վոջնչացնել շահագործող դասակարգերին՝ ազգային ճնշումը կրողներին և հրահրողներին: Կուսակցութունն այդ պատճառով գտնում էր, վոր ազգային հարցը ինքնուրույն և ինքնարավ հարց չէ, այլ մի հարց է, վոր յենթարկված է բանվոր դասակարգի ընդհանուր դասակարգային խնդիրներին, և միայն բանվոր դասակարգի հաղթանակն է ի վիճակի վերջ տալու դասակարգային ու ազգային ճնշմանն ու դրա բոլոր արտահայտութուններին:

Լենինի—Ստալինի կուսակցութունն իր պատմության ամբողջ ընթացքում պաշտպանել է իր ծրագրահույ միջնակ անջատումն ու ինքնուրույն ազգային պետութուն կազմելը: Դրանով կուսակցութունը ընդգծել է, վոր նա մերժում է ազգութունների նկատմամբ ամեն մի բռնութուն և կողմնակից է ժողովուրդների կամավոր միությանը:

Ազգերի ինքնորոշման իրավունքն ընդհուպ միջնակ անջատում ընդունելը խորը հեղափոխական նշանակութուն ունեցավ: Դա ամբապնդեց հեղափոխական պրոլետարիատի դաշինքը ճնշված ազգութունների

¹ Լենին, 4. I, էջ 194, հայ. հրատ., էջ 209:

աշխատավոր մասսաների հետ, համախմբեց բոլոր ազգերի աշխատավորներին ընդհանուր թշնամիների դեմ մղվող կռվում, խլեց բուրժուական նացիոնալիստների վտարի տակի հողը, վորոնք դեմադոգիական լողունգներով ձգտում էին իրենց հետևից քարշտալ ճնշված ժողովուրդների աշխատավորներին:

Ազգային ճնշման դեմ մղվող պայքարում Լենինն ու Ստալինը ուսական պրոլետարիատի վրա հատուկ պարտականութուններ էին դնում. նա պարտավոր էր ոչնության յեղբայրական ձեռք մեկնել և մեկնեցել ճնշված ազգութուններին ընդհանուր դասակարգային թշնամիների դեմ մղվող պայքարում: Լենինը և Ստալինը միևնույն ժամանակ կոչ էին անում ճնշված ժողովուրդների աշխատավորներին կռվել իրենց շահագործողների դեմ, ամբապնդել կապը ուսական հեղափոխական պրոլետարիատի հետ: Լենինի—Ստալինի կուսակցության ինտերնացիոնալ քաղաքականութունն ուղղված էր բոլոր ազգութունների աշխատավորների դասակարգային համերաշխության ամբապնդմանը:

Այս գծի համար մղվող պայքարում բուլճեիկյան կուսակցութունը Լենինի և Ստալինի ղեկավարությամբ դեմ դուրս յեկավ բոլոր յերանդների ոպորտունիստներին, վորոնք աշխատավորներին նացիոնալիզմի ուղին էին հրում և հաճախ սքողվում էին կեղծ «հեղափոխական» Փրագով:

Լենինը և Ստալինը անհաշտ պայքար մղեցին ընդդեմ այսպես կոչված «կուլտուրական-ազգային ավտոնոմիայի» պրոյեկտի, վոր առաջ էին քաշում Բուռդը, մենչեիկները և տրոցկիստները: «Կուլտուրական-ազգային ավտոնոմիայի» էյութունը կայանում էր այն բանում, վոր դա արհեստականորեն անջատում էր ազգային կուլտուրայի հարցերը համա-

պետական հարցերից: «Կուլտուրական-ազգային ավտոնոմիայի» կողմնակիցները պահանջում էին այնպիսի «համազգային միություններ» (այսինքն այնպիսի միություններ, վորոնք ընդգրկեն ամեն ազգի և՛ պրոլետարիատին, և բուրժուազիային) ստեղծել, վորոնք միավորելին ամբողջ յերկրում ամեն մի ազգության ներկայացուցիչներին և վարելին ազգային կուլտուրայի գործը: Քանի վոր ազգային կուլտուրայի գործը գտնվում էր ազգային բուրժուազիայի ձեռքերում, ապա այս պահանջը ամեն ազգի աշխատավորներին «իր» ազգային բուրժուազիային յենթարկել էր նշանակում և արհեստական միջնորմ էր ստեղծում տարբեր ազգությունների աշխատավորների միջև:

«Կուլտուրական-ազգային ավտոնոմիան» հակապրոլետարական, նացիոնալիստական պահանջ էր, վոր վորտ էլին առել ռուսական ոպորտունիստները ավտարիականներից: Լենինը գրում էր.

«Ամբողջից նացիոնալիզմը վորոչ, «արդարացիորեն» սահմանադատված վորոքում, «հաստատել» նացիոնալիզմը, ամուր ու հաստատ միջնորմել բոլոր ազգերը միմյանց միջև հատուկ պետական հաստատության միջոցով—ահա՛ կուլտուրական-ազգային ավտոնոմիայի իդեական հիմքը և բովանդակությունը: Այս միտքն ամբողջովին բուրժուական է և ամբողջովին սխալ է»¹:

«Կուլտուրական-ազգային ավտոնոմիան» չէր դիպչում բուրժուական պետության, բոլոր ազգերի բանավոր դասակարգին և աշխատավորներին ճնշելու համար շահագործող դասակարգերի այդ դեմքի հիմքերին: Նա նույնպես չէր խախտում պետության մեջ պիտատլիստական պետության ամբողջականությունը

¹ Ленин, т. XVII, стр. 146.

պահպանելու յեղանակներից մեկն էր՝ ազգություններին առանձին «գիշումներ» անելու միջոցով կուլտուրայի բնագավառում, վորից կապիտալիստական պայմաններում առավելագույն ընդլուծական է ոգտրվում:

Կուսակցությունը բանվորական միջավայրի մեջ նացիոնալիզմ մտցնելու դեմ պայքարելը կարևորագույն խնդիր էր համարում, առանձնապես նախապատերազմյան ժամանակաշրջանում: Այս ժամանակաշրջանին է վերաբերում նաև ընկեր Ստալինի «Մարքսիզմը և ազգային հարցը» կլասիկ աշխատությունը, վորի քառնէկինգամյակը լրացավ այս տարի (1913—1938): Այս աշխատությանը, վոր իր սայրով ուղղված է «Կուլտուրական-ազգային ավտոնոմիայի» դեմ, Լենինն առանձնապես մեծ նշանակություն էր տալիս: Բացատրելով, թե ինչո՛ւ և ի՛նչ կերպ ազգային հարցն այն ժամանակաշրջանում աչքի ընկնող տեղ բռնեց, Լենինը գրում էր.

«Մարքսիստական թեորետիկ գրականության մեջ իրերի այս վիճակը և ս.-դ. ազգային ծրագրի հիմունքները արդեն լուսաբանվել են վերջերս (առաջին հերթին այստեղ աչքի ընկնող տեղ է բռնում Ստալինի հոդվածը)»¹:

Հենց մի կողմից սեհարյուրյակային սանձարձակության կապակցությամբ, իսկ մյուս կողմից ոպորտունիստների նացիոնալիստական պրոպագանդայի կապակցությամբ ՌՍԴԲԿ (բոլշևիկների) ԿԿ խորհրդակցությունը կուսակցական աշխատողների հետ Պորոնինոյում (սեպտեմբերի 22—հոկտեմբերի 1—ին 1913 թ.) ազգային հարցի վերաբերմամբ ընդունեց Լենինի գրած հատուկ բանաձևը, վոր հաստատում և հիմնավորում էր կուսակցության հեղափոխական լոզունգը՝

¹ Ленин, т. XVII, стр. 116.

ազգերի ինքնորոշման իրավունքն ընդհուպ մինչև ան-
ջատում:

Ազգերի ինքնորոշման իրավունքի վրա ունեցած բողևեիկյան հայացքը ընկեր Ստալինը 1913 թվին հե-
տևյալ կերպ արտահայտեց.

«Ազգը,—գրում եր նա,—կարող է տնօրինել իր
գործը սեփական ցանկությամբ: Նա իրավունք ունի
իր կյանքը տնօրինելու ավտոնոմիայի հիմունքներով:
Նա իրավունք ունի Ֆեդերատիվ հարաբերություններ-
րի մեջ մտնելու մյուս ազգերի հետ: Նա իրավունք
ունի բոլորովին անջատվելու: Ազգը սուվերեն է, և
բոլոր ազգերն իրավահավասար են»¹:

Բայց ընդունելով ազգի սուվերենությունը և նրա
անջատման իրավունքը, բողևեիկյան կուսակցու-
թյունը բնավ չի արտահայտվել այն իմաստով, թե
ազգությունը պարտավոր է անջատվել արդեն իսկ
կազմավորված խոշոր պետությունից, վրը սոցիա-
լիզմի համար պայքարելու ավելի լայնարձակ ասպա-
րեզ է ներկայացնում:

«...Սոցիալ-դեմոկրատիան,— գրում եր Ստալինը
1913 թ.—պարտավոր է այդպիսի ազխտացիա մղել և
ազգերի կամքի վրա այնպես ազդել, վոր ազգերն ի-
րենց գործերը տնօրինեն պրոլետարիատի շահերին ա-
մենից ավելի համապատասխան ձևով»²:

Իսկ պրոլետարիատի շահերին ավելի համապա-
տասխանում է արդեն իսկ կազմավորված խոշոր պե-
տությունը, վորում պրոլետարիատը բոլոր ազգու-
թյունների աշխատավորների ըստ կարելույն մեծ թիվ
է համախմբում՝ հանուն իր դասակարգային շահերի

1 Ստալին, Մարքսիզմը և ազգային-դաշուժային հարցը, էջ
14, հայ. հրատ., 1935 թ., էջ 24:

2 Ստալին, Մարքսիզմը և ազգային-դաշուժային հարցը, էջ
39, հայ. հրատ., 1935 թ., էջ 53:

պայքարելու և հանուն այդ շահերի ներքին և արտա-
քին դասակարգային թշնամիներեց պաշտպանելու:
Կազմավորված խոշոր պետությունը պրոլետարիա-
տին, նրա հաղթանակից հետո, նաև նյութական ա-
վելի մեծ հնարավորություններ է տալիս սոցիալիզմ
կառուցելու համար, ամեն ազգի աշխատավորների
տնտեսական և կուլտուրական վերելքի համար: Բայց
բազմազգ պետության աշխատավորների միջև փո-
խադարձ վստահությունն ասպահովելու համար ան-
հրաժեշտ է ամենալայն դեմոկրատիա, վոր իր մեջ
պարունակի ազգությունների իրավունքն իրենց բախ-
տը միանգամայն ազատ տնօրինելու վերաբերմամբ:

Լենինը մատնանշում էր, թե «... մենք կողմնա-
կից ենք անջատման իրավունքին, նկատի ունենալով
սեհարյուրյակային վելիկոռոսական նացիոնալիզմը,
վորն այնպես մուռտառել է ազգային համակեցության
գործը, վոր յերբեմն ավելի՛ կապ կստացվի ազատ
անջատումից հետո»¹:

«Անջատում միավորման համար»—այսպես կարելի
յե ձևակերպել Լենինի դիրքավորումն այն ժողովուրդ-
ների նկատմամբ, վորոնք ուզում էին ոգտադործել
իրենց անջատման իրավունքը:

Այն ազգերի համար, վորոնք կղերադասեն մնալ
բազմազգ խոշոր պետության սահմաններում, կու-
սակցությունն առաջ քաշեց մարդային ավտոնոմիան:
Նրա առավելությունը պրոլետարիատի շահերի տեսա-
կետով կայանում էր նրանում, վոր նա «... մարդ-
կանց ըստ ազգերի չի սահմանադատում, նա չի ամ-
բապնդում ազգային միջնորմերը,—ընդհակառակը, նա
միայն քանդում է այդ միջնորմերը և բնակչությունը
միավորում է նրա համար, վորպեսզի ճանապարհ

¹ Ленин, т. XVII, стр. 90.

բաց անի մի այլ տեսակի սահմանազատման, ըստ դասակարգերի սահմանազատման համար:

Վերջապես, նա հնարավորութունն է տալիս ամենալավ կերպով ոգտադրժեղու մարզի բնական հարըստութունները և զարգացնելու արտադրողական ուժերը՝ չսպասելով ընդհանուր կենտրոնի վճիռներին, Ֆունկցիաներ, վորոնք հատուկ չեն կուլտուրական-ազգային ավտոնոմիային»¹:

Նախապատերազմյան ժամանակաշրջանին են վերաբերում նաև Լենինի մի շարք կարևորագույն հոդվածներն ազգային հարցի մասին: Լենինը բալկանյան պատերազմների (1912—1913 թ. թ.) կապակցութամբ, վորոնք համաշխարհային իմպերիալիստական պատերազմի նախերգանքը հանդիսացան, մարզարեարար դրում էր.

«Ամբողջ Արևելյան Յեվրոպայի համար թերևս հասնում է ժամը, յերբ իրենց ազատ և վճռական խոսքն իրենք ժողովուրդները կասեն»²:

Իմպերիալիստական պատերազմը, ինչպես արդեն վերելում մատնանշվեց, ազգային հարցի ե՛լ ավելի խիստ սրում առաջ բերեց: Ո՞րն են սերնացրոնալը քայքայվեց: Բոլոր յերանդների ոպորտունիստների կողմից տասնամյակներ շարունակ դուրդուրած նացիոնալիզմը ծաղկեց իսկական դուրյնով, տիրապետող դասակարգերին հնարավորութուն տալով, վոր նրանք իրենց յերկրի աշխատավորներին համաշխարհային արյունահեղ սպանդի մեջ քաշեն: Բանվոր դասակարգի չահերի ստոր դավաճանության և շովինիստական խեղդուկի դեմ հոր կերպով հնչեց Լենինի կանչի ձայնը.

¹ Ստալին, Մարքսիզմը և ազգային-դադուլթային հարցը, էջ 42—43, հայ. հրատ., 1935 թ., էջ 62:

² Ленин, т. XVI, стр. 158.

«Ձայն չտալ ուղմական վարկերին, յերես չտալ «իր» յերկրի (և դաշնակից յերկրներին) շովինիստներին, առաջին հերթին կովել «իր» բուրժուազիայի շովինիզմի դեմ, չսահմանափակվել պայքարի լեզու ձևերով, յերբ կրկիսը հասել է և բուրժուազիան ինքն է խլել իր ստեղծած լեզուութունը,—ահա աշխատանքի այն գիծը, վորը տանում է դեպի քաղաքացիական կռիվը և կհասցնի նրան համայնեվրոպական հրդեհի այս կամ այն մոմենտում»¹:

Հեղափոխական այս գիծը Լենինը դարգացնում և խորացնում է համաշխարհային պոստերազմի ժամանակ: Լենինը խարագանող քննադատությամբ հարձակվում է բոլոր յերկրները սոցիալ-շովինիստների վրա, վորոնք իմպերիալիստական պետութունների սահմանների պահպանումը ամեն յերկրի պորլետարիատի «սրբազան» պարտքն էյին հայտարարել: Լենինն ընդդժում էր, թե բոլշևիկները վո՛չ մի դեպքում ցարկովի կողոպտած յերկրներին պահպան չեն կանդնի, թե ցարկովի պարտութունը ավելի արագ բաց կանի հեղափոխության դարպասները:

Հանդես գալով շովինիզմի, դրա բոլոր արտահայտութունների դեմ, Լենինը խիստ հարձակվում էր նաև պլատակոպականները-բուխարինականները վրա, վորոնք փորձում էյին ազգերի ինքնորոշման իրավունքի մասին կուսակցության լողունդի քննադատության անլան տակ վիժեցնել բանվոր դասակարգի և ճնշված ազգութունների միութունը: Լենինն արհամարհանքով էր խոսում ազգային հարցի պլատահարձակական-բուխարինական «թեորիաների» մասին, մատնանշելով, վոր նրանց դատողութուններն «ուղղակի՛ անհեթեթութուն են» (сапоги в смятку)²:

¹ Ленин, т. XVIII, стр. 70.

² Ленин, т. XIX, стр. 209.

Լենինն ընդգծում էր, վոր այսպիսի «թեորիաները» ջուր են լցնում իմպերիալիստների ջրաղացին, նրանց դյուրութուն են տալիս ճնշելու թույլ ժողովուրդներին:

Լենինը հարձակվում էր նաև դավաճան Տրոցկու վրա, վորը պատերազմի ժամանակ, հանուն «համաշխարհային տնտեսութեան», այսինքն փաստորեն մոնոպոլիստական կապիտալի զարգացման, դեմ դուրս յեկավ ազգային պետութեան իդեալին, ճնշված ժողովուրդների սուվերենութեան և ինքնուրույնութեան իրավունքին: Տրոցկիստական գիծն ուղղված էր իմպերիալիստական անեքսիաներին աջակցելուն և դեմ ազգերի ինքնորոշման ընդհուպ մինչև անջատում իրավունքի մասին կուսակցութեան լողունքին:

Ինչպե՞ս թունավոր թուրք էյին շաղ տալիս Լենինի հասցեյին Ռուսաստանի և մյուս յերկրների «թթու պատրիոտները» դրչակները:

Լենինը, իր շուրջն անխոնջ մոբիլիզացիա անելով պրոլետարական ինտերնացիոնալիզմին հավատարիմ ուժերին, 1914 թվի դեկտեմբերին գրում է «Վեիկոուսների ազգային հպարտութեան մասին» հոդվածը, վորի մեջ նա հուզող տողերով ձևակերպեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի էյությունը:

«Նո՞րթ է արդյոք մեզ, վեիկոուսական գիտակից պրոլետարներս, ազգային հպարտութեան զգացումը, — հարցնում է Լենինը, — իհարկե, վո՛չ: Մենք սիրում ենք մեր լեզուն ու մեր հայրենիքը, մենք ամենից ավելի աշխատում ենք այն բանի վրա, վոր նրա աշխատավոր մասսաներին (այսինքն՝ նրա բնակչութեան ⁹/₁₀-ը) բարձրացնենք մինչև դեմոկրատների ու սոցիալիստների գիտակից կյանքը: Մեզ ամենից ավելի ցավալի յե տեսնել ու զգալ, թե ցարական դահիճները, ազնվականներն ու կապիտալիստները մեր

դեղեցիկ հայրենիքն ինչպիսի բռնությունների, ճնշման և ծաղր ու ծանակի յեն յենթարկում: Մենք հպարտանում ենք նրանով, վոր այս բռնությունները մեր միջավայրից, վեիկոուսների միջավայրից, հակահարված էյին առաջ բերում, վոր այս միջավայրն առաջ է քաշել Ռադիչչեին, դեկարրիստներին, 70-ական թվականների ռազնոչինեց հեղափոխականներին, վոր վեիկոուսական բանվոր դասակարգը 1905 թվականին ստեղծեց մասսաների հզոր հեղափոխական կուսակցությունը, վոր վեիկոուսական մուժիկը միևնույն ժամանակ սկսեց դեմոկրատ դառնալ, սկսեց տապալել տերտերին ու կալվածատիրոջը...

...հենց վեիկոուսական պրոլետարիատի շահերի տեսակետից անհրաժեշտ է մասսաների յերկարատե դաստիարակությունը՝ վեիկոուսների կողմից ճնշված բոլոր ազգերի կատարյալ իրավահավասարութեան ու ինքնորոշման իրավունքի ամենավճռական, հետևողական, համարձակ, հեղափոխական պաշտպանութեան իմաստով»¹:

Այսպես էր գրում վեիկոուսական ժողովրդի լավազույն զավակներից մեկը, վորի մոտ սերը դեպի իր ժողովուրդը զուգորդվում էր մյուս ժողովուրդների իրավունքների և ազատությունների հարգանքով ու պաշտպանութեամբ: Լենինը դրա հետ միասին ցույց էր տալիս բոլոր ազգերի ազատագրման ուղին՝ ընդհանուր դասակարգային թշնամիների տապալման միջոցով:

1917 թվի Փետրվարյան հեղափոխությունն ազգային հարցի լուծման մի նոր հտապ է բաց անում Ռուսաստանում: Լենինն ու Ստալինը կոչ են անում պրոլետարիատին խիստ հակահարված տալ ժամանակա-

1 Լենին, 4. XVIII, էջ 81—83, հայ. հրատ., Ընտիր յերկերի Յեղհատորյակի I հ., էջ 682—686:

վոր կառավարութեան մեծապետական քաղաքականութեանը: Բնորոշ է, վոր այդ ժամանակ ուսուսական բուրժուազիայի հակահեղափոխական կուսակցութեանը, կաղեւտական կուսակցութեանը, ազգային հարցում՝ բունդական-մենչեիկյան-տրոցկիստական դիրքավորման հետ համերաշխ, արտահայտվում է հոգուտ «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» «միասնական ու անբաժանելի Ռուսաստանի» շրջանակներում: Մենչեիկներն ու եսերները վո՛չ մի ջանք չխնայեցին յերկրում իմպերիալիստական ճնշումը պահպանելու համար: Նրանց ոգնում էյին տրոցկիստներն ու բուխարինականները, վորոնք շարունակում էյին պայքարել կուսակցութեան՝ ազգերի ինքնորոշման իրավունքը ընդհուպ մինչև անջատում՝ լոգունդի դեմ:

Ընկեր Ստալինը, վոր խիստ քննադատութեան յենթարկեց տրոցկիստներին և բուխարինականներին կուսակցութեան VII (Ապրիլյան) կոնֆերենցիայում 1917 թվին, ասում էր.

«Յե՛վ յես հարցնում եմ, —կյանքն ինքն էլ հարցնում է, —արդե՞ր մենք այն ժողովուրդների կողմն ենք, վորոնք ճնշման դեմ են պայքարում, թե՞ այն դասակարգերի կողմը, վորոնք նրանց ճնշում են»¹:

Այժմ առանձնապես պարզ է, վոր տրոցկիստներն ու բուխարինականներն ազգային հարցում ճնշող դասակարգերի կողմն էյին անցնում, ձգտում էյին խզել պրոլետարիատի և աշխատավոր ազգութեանները դաշինքը, փորձում էյին զինաթափել պրոլետարիատին, զրկել նրան դաշնակիցներից և դեպի պարտութեաններ տանել դեռ այն ժամանակաշրջանում, յերբ Լենինի—Ստալինի կուսակցութեանը հսկայական ճիգեր

¹ Ստալին, Մարքսիզմը և ազգային-դաղութային հարցը, էջ 49—50, հայ. հրատ., 1935 թ., էջ 72:

եր դործադրում կապիտալիզմի դրո՛շը նախապատրաստելու համար:

Լենինի—Ստալինի կուսակցութեան բոլոր թշնամիների գիծն ուղղված էր կապիտալիստական պետութեանը պահպանելուն, ազգային ճնշմանն աջակցելուն:

Լենինի—Ստալինի կուսակցութեան գիծն ուղղված էր բոլոր ազգերի աշխատավորների միջև փոխադարձ վստահութեանն ու բարեկամութեանն ուժանցիկացնելուն: Բուլչեիկների ազգային հարցի լոգունդներն, ազրարային, հակապատերազմական և այլ հեղափոխական լոգունդների հետ միասին, բուլչեիկյան դրոշակների շուրջն էյին համախմբում Ռուսաստանի ազգութեանների միլիոնավոր մասսաներին:

Լենինի—Ստալինի կուսակցութեան ղեկավարութեամբ ազգային ծայրերկրների աշխատավորների առաջադեմ խավերը ավելի ու ավելի լայն չափերով մտնում էյին պրոլետարիատի դասակարգային մարտերի հունը, դառնում էյին նրա դաշնակիցները, սոցիալիստական հեղափոխութեան դրոշակներն էյին տանում նախկին ուսուսական կայսրութեան բազմաթիվ ժողովուրդների աշխատավորների զանգվածների մեջ:

ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ
ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութիւնը ջարդուփշուր արավ հին «ժողովուրդների բանտը», իսկ դրա հետ միասին նաև իշխանութիւնն իրական-կառավարական այն ապարատը, վոր պահպանում էր ազգային ճնշումը:

Խորհրդային իշխանութիւնն հենց առաջին օրերին այլ ժողովրդական կոմիսարիատների շարքում ստեղծվեց Ազգութիւնների գործերի ժողովրդական կոմիսարիատը, վորին գլխավորում էր ընկեր Ստալինը: Ազգութիւնների գործերի ժողովրդական կոմիսարիատը վիթխարի աշխատանք կատարեց այն միջոցառումները կենսագործելու համար, վորոնք ուղղված էին ազգային ճնշման հետևանքների լիկվիդացիային և սոցիալիստական հեղափոխութիւնն կողմից ազատագրված ժողովուրդների յեղբայրական աշխատակցութիւնն ստեղծելուն:

1917 թվի նոյեմբերի 16 (3)-ին բանվորա-գյուղացիական կառավարութիւնը հրապարակեց Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան, վոր կազմել էր Ստալինը և ստորագրել է ին Լենինն ու Ստալինը: Այս դեկլարացիայի մեջ ընդգծվում էր, թե բանվորա-գյուղացիական կառավարութիւնը վճռականապես խղում է իր կապերը բռնութիւնն ու ճնշման հին քաղաքականութիւնն հետ, դեռ է շարունակում այդ և ազգութիւնների հարցում իր գործունէութիւնն հիմքում դնում է հետևյալ սկզբունքները:—

«1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարութիւնը և սովերենութիւնը:

2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշվելու իրավունքը ընդհուպ մինչև անջատվելը և ինքնուրույն պետութիւն կազմելը:

3. Բոլոր և ամեն տեսակի ազգային և ազգային-կրոնական արտոնութիւնների ու սահմանափակումների վերացումը:

4. Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնութիւնների և ետնագրաֆիկ խումբերի ազատ զարգացումը»:

Խորհրդային իշխանութիւնը ճանաչեց Ֆինլանդիայի ինքնուրույնութիւնն իրավունքները: Նա ընդունեց նաև Ուկրաինայի ինքնուրույնութիւնն իրավունքը: Բայց դրա հետ միասին նա դեմ դուրս յեկավ ուկրաինական Ռադայի հակահեղափոխական քաղաքականութիւնը, այն Ռադայի, վորը ոգնում էր կառնական-կալեզիայան դավադրութիւնը Դոնում և Փուբանում, զինաթափում էր խորհրդային զորքերին, հանդես էր գալիս խորհուրդների դեմ Ուկրաինայում և Խորհրդային Ռուսաստանի դեմ մղած կռիւմ դաշնակցեց գերմանական իմպերիալիստների հետ՝ աջակցելով նրանց սկզբնական յենթարկելու Ուկրաինան: Ռադայի հակահեղափոխական քաղաքականութիւնն այնուհետև ճանապարհ բաց արավ հետման Սկրոպադսկու գերիշխմանը:

ՌԽՖՍՀ և Ուկրաինայի փոխադարձ հարաբերութիւնների հարցն այնուհետև լուծեցին Ուկրաինայի աշխատավոր մասսաներն իրենք, վորոնք տապալելով շահագործող դասակարգերին, ամբարջին յերկու յերկրների ել աշխատավորների դաշինքը սոցիալիզմի համար մղվող պայքարում:

Ռուսական բուրժուազիան, վոր առաջ բոլոր մի-

Չոցներով և ամբողջ ուժերով կալում եր ծայրերկրնե-
րի սեպարատիստական շարժումների դեմ, Հոկտեմբե-
րյան Մեծ սոցիալիստական հեղափոխութեան մոմեն-
տից սկսած ինքն եր աջակցում ազգային բուրժուա-
զիաների սեպարատիստական տենդենցներին, դրանում
հակահեղափոխութեան կենտրոններ և ինտերվենցիայի
համար պլացդարմեր ստեղծելու հնարավորութեան
տեսնելով: Ռուսական խոշոր բուրժուազիայի որդան
«Волы народа»-ն վողջունեց «Իոնի, Ուկրաինայի և
Կուբանի յուրորինակ մարտական կողմիցին», վորին,
ինչպես հույս ունեւ նա, «թերես շուտով կմիանան
նաև այլ մարդեր»:

Ընչտ նույնպես վրացական մենչեիկները սնան-
կացած լիդերները, վորոնք ակտիվ ու գործուն կեր-
պով պաշտպանում եյին իմպերիալիստական պետու-
թեան ամբողջականութունը ժամանակավոր կառավա-
րութեան ժամանակ, սոցիալիստական հեղափոխու-
թեան հաղթանակի մոմենտից սկսած վո՛չ մի ջանք
չխնայեցին Անդրկովկասը հեղափոխական Ռուսաստա-
նից անջատելու համար:

Մյուս ազգութունների (բելոռուսական, ազեր-
բեջանական, հայկական, թուրքմենական, ուզբեկա-
կան, ղազախական և այլն) բուրժուազիան նույնպես
պատերազմ հայտարարեց խորհուրդներին և, նացիո-
նալիստական լողուններով սքողվելով, փորձեց իրենց
աշխատավոր մասսաներին դեպի կոխի տանել ընդդեմ
խորհուրդների:

«Ազգային դրոշակը,—գրում եր ընկեր Ստալի-
նը,—մեջ են գցում մասսաներին խաբելու համար մի-
այն, իբրև ժողովրդականութուն վայելող մի դրո-
շակ, վորը հարմար է ազգային բուրժուազիայի հա-

կահեղափոխական դիտավորութունները քողարկելու
համար»¹:

Նախկին ցարական կայսրութեան բոլոր ազգու-
թունների բուրժուազիան դաշն կապեց իմպերիալիստ-
ների հետ (գերմանական, Ֆրանսական, անգլիական
և այլն), դառնալով նրանց հնազանդ գործիքը խոր-
հրդային իշխանութեան դեմ մղվող կռիւում, մեծա-
ծախով ու մանրածախով վաճառքի հանելով իրենց
յերկրները:

Ռուսական բանվոր դասակարգի աջակցութեամբ և
անմիջական ոգնութեամբ ազգային ծայրերկրների
աշխատավորները հաղթանակ տարան ոտարերկրյա
ինտերվենտներին, բուրժուազիայի, կալվածատերերի,
բայերի վրա, վորոնք ծայրերկրներում պաշտպանում
եյին հին, կիսաճորտատիրական հարաբերութունները:

Անողոր քաղաքացիական կռիւում ազգային ծայր-
յերկրների աշխատավորները բողջեիկներին դեկավա-
րութեամբ հաղթահարեցին այն անվստահութունը,
վոր սերմանել եր բուրժուազիան տարբեր ազգու-
թունների աշխատավորների միջև, նրանք ե՛լ ավելի
պինդ կապեցին իրենց բախտը ուս բանվոր դասակար-
գի հետ և նրա հետ միասին ստեղծեցին այն պողպատե
առաջակալը, վորին դեմ առնելով փշրվում եյին մի-
ջազգային իմպերիալիստներին, նրանց սպիտակ-զվար-
դիական, եսեր-մենչեիկյան արբանյակների բոլոր դա-
վերը:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեան
հաղթանակից հետո գործնականորեն իրականացան
բողջեիկյան լողուններն ազգային հարցի վերաբեր-
մամբ:

Լրիվ չափով արդարացան ընկեր Ստալինի այն

¹ Ստալին, Մարքսիզմը և ազգային-դաշնութային հարցը, էջ
54, հայ. հրատ., 1935 թ., էջ 78:

ցուցումները, վոր արել եր նա բուլլեիկները Համա-
ռուսական VII (Ապրիլյան) կոնֆերենցիայում այն
մասին, թե «...ժողովուրդները»¹⁰ -ը ցարիզմի տա-
պալվելուց հետո չեն կամենա անջատվել»¹:

Նախկին ճնշված ամեն ազգութուններից աշխա-
տավորները խորհուրդները իրենց սահմանադիր հա-
մադումարներում կամավոր կերպով հայտարարեցին,
թե իրենք անսասանորեն կամենում են ռուսական բան-
վոր դասակարգի հետ միասին կովել իրենց հեղափո-
խական նվաճումների համար, թե իրենք կամենում են
ներս հետ միասին և բուլլեիկյան լենինյան—ստալինյան
կուսակցության ղեկավարությամբ սոցիալիզմ կառու-
ցել:

Աշխատավորների արմատական շահերին համա-
պատասխան և ժողովուրդների բարեկամութունն ու
համերաշխութունն ե՛լ ավելի ամրապնդելու նպատա-
կով, պետության նոր տիպ կառուցվեց՝ խորհրդային
սոցիալիստական բազմազգ պետութուն: Մինչ այդ
գոյութուն ունեցող (մինչև այժմ ել գոյութուն ունե-
ցող) կապիտալիստական պետութունների ձևերը, լի-
նի դա բուրժուական—դեմոկրատական հանրապետու-
թյուն կամ սահմանադրական միապետութուն (մի
կողմ թողած դեռ ֆաշիստական պետութուններին),
փաստորեն գործիք են յեղել և գործիք ել են արրապե-
տող դասակարգերի ձեռքում աշխատավոր մասսանե-
րին ճնշելու և ճնշված ազգութուններին հպատակեց-
նելու համար:

Խորհրդային պետութունը «...պետության մի
նոր տիպ ե, վոր հարմարեցված ե վո՛չ թե աշխա-
տավոր մասսաների շահագործման ու ճնշման խնդիր-
ներին, այլ ամեն տեսակի ճնշումից ու շահագործու-

1 Ստալին, Մարքսիզմը և ազգային-դազգութային հարցը, էջ
48, հայ. հրատ., 1935 թ., էջ 70:

մից նրանց լիովին ազատագրելու խնդիրներին, պրոլե-
տարիատի դեկտատուրայի խնդիրներին»¹:

Խորհրդային պետութունը ժողովուրդների կամա-
վոր միութուն ե ներկայացնում և արմատապես տար-
բերվում ե կապիտալիստական պետութուններից, վո-
րոնց մեջ ազգութուններից վրմանք իշխում, իսկ
մյուսները ճնշման մեջ են գտնվում, չխոսելով արդեն
գաղութների և կիսագաղութների ստրկական վիճակի
մասին:

Ազգերի լիակատար հավասարության հիման վրա
կառուցվեց և ամրացավ Ռուսաստանի Խորհրդային
Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետութունը:

Խորհուրդների III Համառուսական համադումարը,
վորում ընկեր Ստալինը հանդես յեկավ ազգային հար-
ցի վերաբերմամբ զեկուցումով, հուշակեց.—

«Խորհրդային Ռուսական Հանրապետութունը
հիմնվում ե ազատ ազգերի ազատ դաշինքի հիման
վրա, վորպես Խորհրդային ազգային հանրապետու-
թյունների ֆեդերացիա»:

ՌԽՖՍՀ Սահմանադրութունը, վոր ընդունել եր
Խորհուրդների V Համառուսական համադումարը (1918
թվի հուլիսի 10), որինակ ծառայեց բոլոր մյուս, սո-
ցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո
առաջացած, խորհրդային սոցիալիստական հանրապե-
տությունների սահմանադրութունների համար:

ՌԽՖՍՀ Սահմանադրութունը հաստատեց խոր-
հրդային ավտոնոմիայի սկզբունքը:

«Այն մարզերի խորհուրդները, վորոնք աչքի յեն
ընկնում հատուկ կենցաղով և ազգային կազմով, կա-
րող են միավորվել ավտոնոմ մարզային միություն-
ները մեջ ընդհանրապես, վորոնց, ինչպես և ամեն մի

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 32, Հայկուսհրատ.,
1937 թ., էջ 64:

կազմվել կարողացող մարդային միավորների գլուխ են կանգնում խորհուրդների մարդային համագումարները և դրանց գործադիր որգանները»:

Այսպիսով խորհրդային Ֆեդերացիայի հիմքը դարձավ ավտոնոմիան՝ խորհուրդների բաղադրյալ վրա:

«Ավտոնոմիան, — գրում էր Լենինը, — դեմոկրատական պետության կառուցման մեր պլանն է»¹:

Խորհրդային ավտոնոմիաների շինարարութունը ՌԽՖՍՀ մեջ սկսվեց 1918 թվից: Թաթարները և բաշկիրները զազախները և չուվաշները, մարիները և կարմիկները, ուզբեկները և յակուտները, լեռնական, Դաղստանի և մյուս ժողովուրդները ուսսահան բանվոր դասակարգի ոգնությամբ իրենց նոր ազատ կյանքը կառուցելու հնարավորութուն ստացան՝ Ռուսաստանի ժողովուրդների հավասարության սկզբունքներով:

Կուսակցութունը դասակարգային կատարի կրավում հաղթահարեց մեծապետական շովինիզմին, վորի ներկայացուցիչները, անդրադարձնելով ջախջախված շահագործող դասակարգերի շահերը, փորձում էին հակադրել ավտոնոմիաների շինարարությանը, արհամարհանքով էին վերաբերվում ազգային առանձնահատկութուններին, ազգային իրավահավասարությանը, ազգութունների մայրենի լեզուներին, նրանց պետականութուն ստեղծելուն և այդ ազգութուններին պետական ապարատի մեջ ներգրավելուն:

Կուսակցութունը միևնույն ժամանակ պայքարում էր տեղական նացիոնալիզմի դեմ, վորի ներկայացուցիչները ձգտում էին իրենց շահերի համար ոգաագործել այն իրավունքները, վոր տվել էր սոցիալիստական հեղափոխութունը նախկին ուսսական կայսրության ժողովուրդներին: Նրանք փորձում էին դիմա-

¹ Ленинский сборник III, стр. 472.

դրել բանվոր դասակարգի դիկտատուրայի միջոցառումներին և աջակցել առաջներում ճնշված ազգերի շահագործող դասակարգերի մնացորդների ազդեցությանը:

Ավտոնոմիաների ձևերը չէին կարող ամենուրեք միևնույնը լինել: Դրանց տարբերությունը թելադրվում էր այն առանձնահատուկ պայմանների կողմից, վորոնց մեջ գտնվում էր ամեն մի ժողովուրդը: Բայց թե տարբեր ավտոնոմիաների (ավտոնոմ հանրապետութուն, ավտոնոմ մարզ) եյությունը նույնն է: Դա բանվոր դասակարգի դիկտատուրայի ազգային ձևն է, վոր ուղղված է ժողովուրդների միջև յեղբայրական հարաբերություններ և աշխատակցութուն ստեղծելուն՝ ընդհանուր տերիտորիայի և ընդհանուր եկոնոմիկայի բաղադրյալ միահամուռ ուժերով սոցիալիզմ կառուցելու համար:

Ավտոնոմիաներն իրագործվում էյին ազգայինպետական միավորումներ կազմելով, բնիկ ազգությունների ներկայացուցիչներից իշխանության ուրգաններ ստեղծելով, ազգային դպրոցներ և տեղական լուսավորական հիմնարկներ կազմակերպելով՝ մայրենի լեզվի ազատ դարգացումը և դրա հավասարությունը հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում լիովին ապահովելու պայմաններում:

Խորհրդային Ֆեդերատիվ պետութունը, վոր հիմնված է խորհրդային ավտոնոմիայի վրա, սկզբունքորեն տարբերվում է բուրժուական բոլոր Ֆեդերատիվ պետություններից:

1918 թվի ապրիլին ընկեր Ստալինը ՌԽՖՍՀ կազմակերպելու հարցի մասին «Известия»-յի թղթակցի հետ ունեցած զրույցում, բնութագրելով բուրժուական Ֆեդերացիաները, ասաց, թե զոյութուն ունե-

ցող բոլոր Ֆեդերատիվ միավորումներից բուրժուա-
կան-դեմոկրատական կարգի համար առավել բնորոշը
ամերիկյան և չվեյցարական Ֆեդերացիան է: Ընկեր
Ստալինը մատնանչեց, վոր այս Ֆեդերացիաները վա-
ղուց արդեն ունիտար պետութուններ են: Ընկեր
Ստալինը նչեց նաև, վոր «զարգացման այս ամբողջ
պրոցեսը՝ անկախութունից դեպի ունիտարիզմ՝ ըն-
թացել է մի շարք բունութունների, ճնշումների և
ազդային պատերազմների միջոցով»:

Որինակ, Շվեյցարիայում 1847 թվին կանտոննե-
րի մի մասը, կաթոլիկ տերտերների դրդումով, միա-
նալով և «Առանձին միութուն» (Չոնդերբուհդ) կազ-
մելով, վորոշեց անջատվել մնացած կանտոններից:
Դա քաղաքացիական կռիվ առաջ բերեց, վորը վեր-
թյամբ: Անկասկած է, վոր կապիտալիզմի զարգաց-
ման տեսակետից կանտոնների միավորումն առաջադի-
մական քայլ էր, և դեմոկրատական տարրերը «Առան-
ձին միության» դեմ եյին: Բայց թե այս «միավորու-
մը» գլուխ բերվեց ուժով և ուղղակի բունությամբ:
Մինչև այժմ էլ առանձին կանտոնների միջև հակա-
սություններ կան, վորոնք կապիտալիզմն ի վիճակի
չեն լուծելու:

Կամ վերցնենք ԱՄՆ: 1861—1865 թ.թ. քաղաքա-
ցիական պատերազմ ծագեց հյուսիսային և հարավա-
յին նահանգների միջև, վորոնք մտադիր եյին անջատ-
վել միությունից: Այստեղ էլ հյուսիսն ավելի դեմո-
կրատական տենդենց էր արտահայտում ստրկատիրա-
կան հարավի հանդեպ: Պատերազմը վերջացավ հարա-
վի պարտությամբ և հպատակեցմամբ: Բայց թե սա-
չվերացրեց արդյունարերական հյուսիսի և ազրարա-
յին հարավի միջև յեղած հակասությունները, վորոնք
չեն կարող լուծվել կապիտալիզմի պայմաններում:

Դեռ մինչև 1861—1865 թ.թ. քաղաքացիական պա-
տերազմն ԱՄՆ տերիտորիան ընդլայնվում էր վո՛չ թե
միացվող տերիտորիաների բնակչության կամավոր
ցանկությամբ, այլ հաճախ առևտրական դործարքնե-
րի և պատերազմի միջոցով: Այսպես, 1803 թվին ԱՄՆ
գնեցին Ֆրանսիայից Լուիզիանան, վորտեղ նեդերերը
մինչև այժմ դտնվում են կիսատրիական դրության
մեջ: 1819 թվին ԱՄՆ գնեցին Իսպանիայից Ֆլորի-
դան: 1845 թվին, Մեքսիկայի հետ պատերազմելու
հետևանքով, ԱՄՆ տիրեցին Տեխասին և այլն:

Բուրժուական Ֆեդերատիվ պետութուններն ան-
վանապես միայն դեռ Ֆեդերատիվ պետութուններ են
համարվում: Փաստորեն նրանք վոչնչով չեն տարբեր-
վում ունիտար պետութուններից, այսինքն՝ այնպի-
սիներից, ինչպիսին Լեհաստանն է և մյուսները, վո-
րոնք մեկ բյուրոկրատորեն կենտրոնացված պետու-
թյուն են ներկայացնում ու չեն բաժանվում վորևե
«ինքնուրույն» և «դաշնակից» մասերի: Պրոլետարիա-
տի դեմ դասակարգային սուր մարտերի պահին բուր-
ժուազիան իր գրիկատորական իշխանությունը կենտ-
րոնացնելու նպատակով բոլորովին դեն է չլքսում
ամեն մի «դաշնակցային» զիզի-պիզին: Դա առանձնա-
պես ցայտուն արտահայտվում է Գերմանիայի որև-
նակի վրա:

Գերմանիան մինչև Հիտլերի իշխանության գլուխ
անցնելը, դեռ հարաբերաբար «դաշնակցային» պետու-
թյուն էր համարվում: Առանձին «յերկրներ» (Բավա-
թյուն, Վյուրտեմբերգը և մյուսները) ունեյին իրենց
պառլամենտները (լանդտագները), իրենց կառավա-
րությունները, իրենց սահմանադրությունները: Հիտ-
լերն այս բոլորին վերջ տվեց: Բոլոր նախկին «ինք-
նուրույն» յերկրներում նա իր կուսակալներին (չտաս-
հարտեր) նշանակեց, վորոնք Ֆաշիստական տեուրն ու

կամայականութիւնն ամբաստնելու, այդ նույնը նաև ճնշված ազգութիւնների վրա տարածելու համար բյուրոկրատական ցենտրալիզացիան գլուխ բերին, առանց վորեւ «դաշնակցային» պաճուճանքի:

Այս որինակներից յերևում է, թե միութեան «կամալորութեան» մասին բուրժուական դաշնակցային պետութիւններում խոսք անգամ չի կարող լինել:

Յեւ, ընդհակառակը, ժողովուրդների միավորման կամալորութիւնը խորհրդային պետութեան մեջ բըղխում է լենինյան-ստալինյան ազգային քաղաքականութեան սկզբունքներից և խորհրդային ազգութիւնների իրենց հենց աշխատավորների միավորվելու և մեկ դաշնակցային պետութիւն կազմելու կամալոր ցանկութիւններից:

Բոլոր ազգերի աշխատավորների այդ կամալոր միութեան մեջ է խորհրդային միութենական պետութեան հզորութիւնը:

Ռուսական բանվոր դասակարգի և նախկին ճընշված ազգութիւնների աշխատավորների միջև դոյութիւն ունեցող սերտ, անխզելի կապը հեշտացրեց քաղաքացիական պատերազմի հաղթական վախճանը և հաստատուն հիմք դարձավ սոցիալիստական շինարարութեան համար: Բոլոր ժողովուրդների աշխատավորների միջև այս սերտ կապն ամրապնդու դարձրեց բազմազգ մի աշխարհի պետութիւնը, վորպիսին ՌՍՖՅ տութիւնների հաղթանակը և նախապատրաստեց բոլոր խորհրդային հանրապետութիւնների սերտ միավորումը և մեկ դաշնակցային պետութիւն՝ խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն ստեղծելը:

ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐ ՄԻՈՒՅՅՈՒՆԸ

Սոցիալիստական բազմազգ պետութեան բնորոշ գիծն այն է, վոր նա իրավահավասար ժողովուրդների կամալոր միավորում է հանդիսանում:

Շահագործողների դեմ մղված կատաղի դասակարգային պայքարում են նվաճվել ժողովուրդների ազատութիւնն ու հավասարութիւնը, ստեղծվել ու ամրապնդվել ուղղափառ և տնտեսական միութիւնը ՌՍՖՅ ու անկախ խորհրդային հանրապետութիւնների միջև, վորոնք ծնունդ են առել իրրեւ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեան հաղթանակների հետևանք: Անկախ խորհրդային հանրապետութիւնները շահագործողների մոլեգին դիմադրութեան և կապիտալիստական յերկրների ինտերվենցիայի պայմաններում կարող ելին հենվել միայն ՌՍՖՅ վրա:

Արդեն 1918 թ. նոյեմբերին Ուկրաինայի ժամանակավոր բանվորա-գյուղացիական կառավարութիւնը իր մանիֆեստի մեջ հռչակում է խորհրդային հանրապետութիւնների միասնութիւնը:

1919 թ. հունվարի 26-ին Ուկրաինայի բանվորա-գյուղացիական ժամանակավոր կառավարութիւնը հայտարարեց.

«Բանվորական ու Գյուղացիական Ուկրաինայի և խորհրդային Ռուսաստանի պատմական, տնտեսական ու կուլտուրական սերտ կապը մեզ վրա պարտականութիւն է դնում մեր հեղափոխական դասակարգային

Ֆրոնտը հավասարեցնելու ամենից առաջ Ռուսաստանի պրոլետարիատի Ֆրոնտի հետ: Խորհրդային Ռուսաստանի թշնամիներին մենք հայտարարում ենք Խորհրդային Ռեկրաինայի թշնամիներ: Մեր քաղաքական, տնտեսական ու ուղղմական խնդիրները միատեսակ են: Կռիվը սպիտակ-գվարդիականների դեմ, կռիվը դաշնակիցներին խմբերկալիցի դեմ և կռիվն ընդդեմ ռեկրաինական բուրժուազիայի՝ հանձին Դիրեկտորիայի՝ միակերպ անհրաժեշտ պայմանն է հանդիսանում խորհրդային իշխանութան ամրապնդման համար ինչպես Ռուսաստանում, նույնպես եւ Ռեկրաինայում: Ռուսական բուրժուազիայի և ուսական կալվածատերերի լիակատար ջախջախումը պայման է հանդիսանում խորհրդային իշխանութունը վո՛չ միայն Ռուսաստանում ամրապնդելու համար, այլև Ռեկրաինայում:

Այս ամենը կանխորոշում է Ռեկրաինական Խորհրդային Հանրապետութան միավորումը Խորհրդային Ռուսաստանի հետ՝ սոցիալիստական Ֆեդերացիայի հիմունքներով, վորի ձևերը լիազոր ներկայացուցիչները կսահմանեն Համառեկրաինական Խորհուրդների համագումարում»:

1919 թ. մայիսի 18-ին ՌեՍՄՀ ԿԳԿ հանձնարարեց իր Նախագահութանը՝ դիմել բոլոր խորհրդային հանրապետութուններին և առաջարկութուն անել՝ միավորելու իրենց բոլոր նյութական միջոցները, վորոնք անհրաժեշտ են՝ ի պաշտպանութուն խորհրդային իշխանութան պայքար մղելու համար:

ՌեՍՄՀ հետ սերտ միութուն կազմելու մասին խոսում էլին նաև Բելոռուսական խորհրդային կառավարութան վորոշումները:

ՌեՍՄՀ և մյուս խորհրդային հանրապետութունների միջև կայացած համաձայնութուններին հետևեց

1919 թ. հունիսի 1-ին ՌեՍՄՀ Համառուս. ԿԳԿ դեկրետը, վորով հռչակվում էր Ռուսաստանի, Ռեկրաինայի, Բելոռուսիայի և այլն խորհրդային հանրապետութունների միավորումը՝ համաշխարհային իմպերիալիզմի դեմ կռիվելու համար: Ըստ այդ դեկրետի միավորվում էլին կառավարման հետևյալ ճյուղերը. ուղղմական, տնտեսական, տրանսպորտային, Ֆինանսական, աշխատանքային:

Բայց այդ միավորումը չիրագործվեց Ռեկրաինայում և Բելոռուսիայում սկսված ինտերվենցիայի հետևանքով: Տերիտորիաները սպիտակ-գվարդիականներից և ինտերվենտներից ազատվելու հետ զուգընթաց խորհրդային հանրապետութունները նորից սերտ կապ են հաստատում միմյանց հետ:

1920 թ. հունվարի 28-ին Համառեկրաինական հեղափոխական կոմիտեն վորոշում ընդունեց ՌեՍՄՀ և ՌեՍՖՍՀ միավորման մասին: ՌեՍՖՍՀ դեկրետները Ռեկրաինայի տերիտորիայում ուժի մեջ էլին մտնում հետևյալ հարցերի վերաբերմամբ. — ուղղմական, պարենավորման, ժողովրդական տնտեսութան, աշխատանքի, սոցիալական ապահովութան, հաղորդակցութան ճանապարհների, փոստի ու հեռագրի:

Համառեկրաինական Խորհուրդների IV համագումարը, հապտատելով Համառեկրաինական հեղկոմի վորոշումը, հայտարարեց, վոր «ՌեՍՄՀ, պահպանելով իր ինքնուրույն պետական սահմանադրութունը, Համառուսական Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետութան անդամն է հանդիսանում»: Ի կատարումն սրա՝ ՌեՍՄՀ IV համագումարը 30 ներկայացուցիչներ ընտրեց ՌեՍՖՍՀ Համառուս. ԿԳԿ կազմի համար, իսկ 1920 թ. դեկտեմբերի 28-ին պայմանագիր կնքվեց ՌեՍՄՀ ու ՌեՍՖՍՀ միջև:

1921 թ. հունվարի 16-ին պայմանագիր կնքվեց

ՌեհմՍՆ ու ԲեՍՆ միջև: Այդ պայմանագրի համաձայն ԲեՍՆ ժողովոմասները միավորվում էին ՌեհմՍՆ ժողովոմասների հետ, բացի դրանից, ԲեՍՆ իր ներկայացուցիչներն էր ուղարկում Համառուս. ԿԳԿ:

Խորհրդային իշխանությունն Անդրկովկասում հաղթանակելու հետ զուգընթաց՝ այնտեղ կազմված խորհրդային հանրապետությունները սերտ հարաբերությունների մեջ էին մտնում ՌեհմՍՆ հետ: Այսպես, Ադրբեջանական խորհրդային անկախ հանրապետության Ռազմա-հեղափոխական կոմիտեյի կողմից Խորհրդային Ռուսաստանին ուղղված դիմումի մեջ ասված էր.

«Հնարավորություն չունենալով սեփական ուժերով հետ վանելու արտաքին և ներքին հակահեղափոխության միացյալ բանդաների գրոհը, Ռազմա-հեղափոխական կոմիտեն առաջարկում է Ռուսաստանի Խորհրդային Հանրապետության կառավարությանը՝ յեղբայրական միություն մեջ մտնել համաշխարհային իմպերիալիզմի դեմ միասին կռվելու համար»:

Արդյունքը յեղավ այն, վոր ՌեհմՍՆ ու Խորհրդային Ադրբեջանի միջև 1920 թ. սեպտեմբերի 30-ին պայմանագրի կնքվեց ռազմա-տնտեսական միություն կազմելու մասին. կնքվեցին նաև մի շարք համաձայնություններ ուրիշ կարևորագույն հարցերի վերաբերմամբ: Համանման պայմանագրեր կնքվեցին նաև Վրաստանի հետ (1921 թ. մայիսի 21-ին) և Հայաստանի հետ (1921 թ. սեպտեմբերին):

Լենինը, խոսելով խորհրդային Ֆեդերացիայի մասին, դիտում էր այն «... վորպես անցում դեպի գիտակցական և ավելի սերտ միասնություն աշխատավորների, վորոնք սովորել են կամովին վեր բարձրանալ ազգային յերկպառակությունից»¹:

1 Լենին, Վ. XXII, էջ 372, Հայպետհրատ, 1932 թ., էջ 477:

Ընկ. Ստալինը, կուսակցության XII համագումարում նշելով ԽՍՀՄ ստեղծելու սկզբունքները, ընդգծում էր. «Այդ Միություն հիմքը՝ Միության անդամների կամավորությունն ու իրավական հավասարությունն են»¹:

«Մենք,—գրել է Լենինը,—ուզում ենք ազգերի կամավոր միություն,—այնպիսի միություն, վորը չթույլատրի վոչ մի բռնություն մի ազգի կողմից մյուս ազգի վերաբերմամբ,—այնպիսի միություն, վորը հիմնված լինի ամենալիակատար վստահության վրա, յեղբայրական միասնության պարզորոշ գիտակցման վրա, միանգամայն կամավոր համաձայնություն վրա»²:

«... Ժողովուրդների վոչ մի միություն,—մասնանշել է ընկեր Ստալինը,—ժողովուրդների վոչ մի միավորում իրրև միասնական պետություն՝ չի կարող հաստատուն լինել, յեթե նա հիմնված չէ լիակատար կամավորության վրա, յեթե տվյալ ժողովուրդը, յեթե ժողովուրդներն իրենք չեն ուզում միավորվել»³:

Ուստի կուսակցությունը զգուշաբար և շրջահայաց կերպով նախապատրաստել է բոլոր անկախ խորհրդային հանրապետությունների պետական միություն կազմելու գործը, լավ հիշելով Լենինի այն ցուցումները, վոր «Այդպիսի միություն անհնարին է միանգամից իրագործել. դրան պետք է աշխատենք հասնել մեծագույն համբերատարությամբ և զգուշությամբ, վորպեսզի գործը չհիշացնենք, վորպեսզի ան-

1 Ստալին, Մարքսիզմը և ազգային-դաշնության հարցը, էջ 114, Հայպետհրատ, 1935 թ., էջ 156:

2 Լենին, Վ. XXIV, էջ 657:

3 Ստալին, Մարքսիզմը և ազգային-դաշնության հարցը, էջ 114, Հայպետհրատ, 1935 թ., էջ 156:

վստահութիւնն առաջ չբերենք, վորպեսզի վերացնենք կարգաւորութեանն ու կապիտալիստների ճնշման, մասնավոր սեփականութեան և թշնամանքի դարերից թողած անվստահութիւնը, այն թշնամանքի, վոր ծագում էր մասնավոր սեփականութեան բաժանման ու վերաբաժանման պատճառով»¹:

Հարկավոր յեղավ, վոր բոլոր ազգութիւնների աշխատավորները հինգ տարի (1917—1922 թ. թ.) միասին հերոսական ջանքեր թափեն ռազմական ու տնտեսական ճակատներում, վորպեսզի հանրապետութիւնների միավորման համար տեղի ունեցող հզոր շարժումը հնարավոր դարձնեն մեկ միութենական պետութիւն ստեղծելու հարցադրումը:

Կուսակցութիւնը կանգնած էր այդ շարժման գլուխ, ղեկավարում էր այն: Լենինի և Ստալինի նախաձեռնութիւնը միութենական պետութիւն ստեղծելու մասին՝ լայն արձագանգ գտավ սկզբում Ադրբեջանում, ապա Հայաստանում և Վրաստանում: Այս հանրապետութիւններին շուտով միացան Ուկրաինան և Բելոռուսիան:

Բայց այդ շարժումը նացիոնալիստների դիմադրութեանը հանդիպեց: Ծիշտ է, միասնութեան համար տեղի ունեցող շարժումն այն աստիճան հզոր էր, վոր նրա դեմ բացահայտորեն դուրս գալ նացիոնալիստները չէին համարձակվում: Սակայն նրանք ձգտում էին ամեն կերպ խեղաթյուրել Միութեան իմաստն ու նշանակութիւնը: Որինակ, ուկրաինական նացիոնալիստները արոցկիստների հետ միասին ձգտում էին Միութեան նշանակութիւնը թուլացնել ու աղավաղել նրանով, վոր աշխատում էին խոչընդոտ հարուցել այնպիսի ժողովրդատների միացման դեմ, ինչպիսին Արագոթժողովրդատն ու Արաքին Առևտրի

1 Լենին, 4. XXIV, էջ 657:

Ժողովրդատն են, վորոնց միջոցով խորհրդային հանրապետութիւնները միացած դուրս են գալիս կապիտալիստական աշխարհի առաջ: Միութենական պետութիւն ստեղծելու համար տեղի ունեցող շարժմանը դիմադրութիւն էին ցույց տալիս վրացական և մյուս նացիոնալիստները:

Կուսակցութիւնն ապացուցում էր, վոր քաղաքացիական պատերազմի ճակատում ձեռք բերված հաղթանակներով ղեռնա չի վճռվում կովի վերջնական յեղքը: Վորջափով կապիտալիստական շրջապատումը մնում է, այնչափով էլ հնարավոր են իմպերիալիստների նաև նոր պրովոկացիաները, վոր կարելի չէ հեռավոր բոլոր խորհրդային հանրապետութիւնների բոլոր մարդկային ու նյութական ռեսուրսների սերտ միավորումով միայն:

Ընկեր Ստալինը ՌԽՖՍՀ Խորհուրդների X համագումարում 1922 թ. դեկտեմբերի 26-ին ԽՍՀՄ ստեղծելու հարցի մասին տված իր ղեկուցման մեջ ընդձեռն հանդամանքների յերեք խումբ, վորոնք թելադրել են խորհրդային հանրապետութիւնների միավորումը մեկ միութենական պետութեան մեջ:

Հանդամանքների առաջին խումբը վերաբերում է տնտեսական դրութեանը: Քայքայումը հաղթահարելու և տնտեսութեան հետագա զարգացումն ապահովելու համար հարկավոր էր միավորել տնտեսական և ֆինանսական բոլոր ռեսուրսները, հաղորդակցութեան ու կապի բոլոր միջոցները և այլն: Հարկավոր էր բոլոր խորհրդային հանրապետութիւնների վերելքի ոգի խորհրդային կերպով ոգտագործել պատմականօտին պլանաչափ կերպով ոգտագործել առանձին բն առաջ յեկած՝ աշխատանքի բաժանումն առանձին շրջանների միջև (մանուֆակտուրան՝ հյուսիսում, վառելիքայութիւն և բամբակը՝ հարավում ու արևելքում և այլն):

Հանգամանքների յերկրորդ խումբը վորոշվում եր արտաքին պատճառներով. այդ, առաջին, խորհրդային հանրապետությունների ռազմական դրություններ կապիտալիստական շրջապատման պայմաններում:

Ընկեր Ստալինն ասել է, թե հարկավոր է «...հիշել, վոր, չնայած մեր հանրապետությունները բարեբախտ դուրս յեկան քաղաքացիական պատերազմի կացությունից, դրսից հարձակման յենթարկվելու վտանգը բնավ ել բացառված չէ: Այդ վտանգը պահանջում է, վոր մեր ռազմաճակատը բացարձակ միասնական լինի, վոր մեր բանակն անպայման միասնական լինի...»¹:

Բացի դրանից, անհրաժեշտ եր խորհրդային հանրապետություններն ապահովել տնտեսական մեկուսացումից: 1922 թվականին ձեռնվալում և Հաագայում կայացան «տնտեսական կոնֆերենցիաներ», վորտեղ բանակցությունների համար անանկացած իմպերիալիստական ինտերվենտները հրավիրեցին նաև խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչներին, հույս ունենալով «խաղաղ» ինտերվենցիայի հնարավորություն ստեղծելու: Իմպերիալիստները պահանջում էին վճարել պատերազմական և նախապատերազմյան բոլոր պարտքերը, ոտարերկրյա հպատակներին վերադարձնել նրանցից խլված-ազգայնացված սեփականությունը և ոտարերկրյա կապիտալիստներին խորհրդային հանրապետություններում այնպիսի իրավունքներ ու արտոնություններ տալ, վորոնք այդ հանրապետությունները կիսազաղուծ դարձնեյին: 1922 թ. փետրվարի 22-ին խորհրդային հանրապետությունները համաձայնություն ստորագրեցին ձեռնվալի կոնֆերենցիայում միտտեղ հանդես գալու և իրենց

¹ Ստալին, Մարքսիզմը և ազգային-դադութային հարցը, էջ 91, Հայկուսհրատ, 1935 թ., էջ 126:

ներկայացուցչությունը ՌԽՖՍՀ հանձնելու մասին: Բոլոր միութենական հանրապետությունների միակուռ և համերաշխ յելույթը հասցրեց այն բանին, վոր իմպերիալիստների «խաղաղ» ինտերվենցիայի փորձերը հետ մղվեցին: Ընկեր Ստալինը, այդ մասին հիշեցնելով, ասել է.

«Ինտերվենցիայի այս նոր ձևը, վորը պակաս վտանգավոր չէ, քան ռազմական ինտերվենցիան, կարող է վերացվել կապիտալիստական շրջապատման հանդեպ մեր խորհրդային հանրապետությունների միասնական տնտեսական ճակատ ստեղծելով միայն»¹:

Դրա հետ միասին ընկեր Ստալինն ընդգծել է նաև դիվանագիտական ճակատի միավորման անհրաժեշտությունը:

Հանգամանքների յերրորդ խումբը խորհրդային իշխանությունների դասակարգային բնությունից ու նրա ինտերնացիոնալ էյությունից է բղխում: Ընկեր Ստալինը մատնանշել է.

«... Յեթե, յես ասում եմ, այնտեղ, Արևմուտքում, վորտեղ կապիտալիստական դեմոկրատիան է թագավորում, և վորտեղ պետությունները հիմնված են մասնավոր սեփականության վրա, պետության հենց բազան տրամադրում է ազգային փոխադարձ զգազոցի, կոնֆլիկտների ու պայքարի, ապա այստեղ, խորհուրդների աշխարհում, վորտեղ իշխանությունը կառուցված է վոչ թե կապիտալի, այլ աշխատանքի վրա, վորտեղ իշխանությունը կառուցված է վոչ թե մասնավոր սեփականության, այլ կոլեկտիվ սեփականության վրա, վորտեղ իշխանությունը կառուցված է վոչ թե մարդը մարդուն շահագործելու, այլ այդ շահագործման դեմ պայքարելու վրա, այստեղ, ընդհա-

¹ Ստալին, Մարքսիզմը և ազգային-դադութային հարցը, էջ 91-92, Հայկուսհրատ, 1935 թ. 126:

կառակը, իշխանության հենց բնությունը տրամա-
դրում է այն բանին, վոր աշխատավոր մասսաները
բնականորեն ձգտեն միավորվելու սոցիալիստական մի-
ընտանիքի մեջ»¹։

Սրանք են այն հանգամանքները, վորոնք ԽՍՀՄ
ստեղծման հիմքն են կազմել։ Սրանցից յեղևելով, միա-
վորված չորս հանրապետութայունների (ՌՆՖՍՀ,
ՈւՍՍՀ, ԱՆՖՍՀ, ԲՍՍՀ) ներկայացուցիչները ԽՍՀՄ
Խորհուրդների I համագումարում ընկեր Ստալինի գե-
կուցման առթիվ (1922 թ. դեկտեմբերի 30) ընդունե-
ցին ԽՍՀՄ կազմելու մասին գեկլարացիա ու պայ-
մանադիր, վորով հաստատեցին իրենց անդրդվելի
պատրաստակամութայունը՝ առաջ ընթանալու միաս-
նական սոցիալիստական միութենական պետութայն
միավորված ճակատով։

«Միայն Խորհուրդների բանակում, —ասված է
ԽՍՀՄ կազմվելու վերաբերյալ գեկլարացիայում, —
միայն պրոլետարիատի գեկտատուրայի պայմաննե-
րում, վորն իր շուրջն է համախմբել բնակչութայն
մեծամասնութայունը, հնարավոր յեղավ արմատից վո-
չընչացնել ազգային ճնշումը, փոխադարձ վստահու-
թայն պարազաներ ստեղծել և ժողովուրդների յեղ-
բայրական համագործակցութայն հիմքերը դնել»։

Այս հաղթանակը վերջնականապես ամրապնդելու
համար հարկավոր էր դեռ ջախջախել նաև հետադա-
մեքենայութայունները նացիոնալիստների, տրոցկիստ-
ների ու բուխարինականների, վորոնք փորձում էին
հետադաշում ել խեղաթյուրել Միութայն եյությունը։

Դեռևս կուսակցութայն XII համագումարի նախո-
րյակին և բուն իսկ համագումարում (1923 թ. ապրի-
լին) ընկեր Ստալինը կտրուկ կերպով հանդես յեկավ

¹ Ստալին, Մարքսիզմը և ազգային-դադութային հարցը, էջ
92—93, Հայկուսհրատ, 1935 թ., էջ 127—128;

տրոցկիստական-նացիոնալիստական այն նախագծի
դեմ, վորի նպատակն էր ԿԳԿ յերկրորդ պալատ կազ-
մակերպել յազգերի անհավասարութայն հիմունքնե-
րով։ Այդ նախագծի տրոցկիստական-նացիոնալիստա-
կան եյությունն այն էր, վոր նա արմատական տար-
բերութայուն էր դնում, որինակ, Ուկրաինայի իրա-
չունքների ու Թաթարական, Բաշկիրական և մյուս
ավտոնոմ հանրապետութայունների իրավունքների մի-
ջև՝ իշխանութայն գերադույն որդանում մասնակցու-
թյուն ունենալու նկատմամբ։

Տրոցկիստական-նացիոնալիստական նախագծի հա-
մաձայն՝ յերկրորդ պալատում—Ազգութայունների Խոր-
հըրդում—ավտոնոմ հանրապետութայունների կողմից
ներկայացուցչութայն ունենալը բոլորովին բացառ-
վում էր։ Ընկեր Ստալինը կուսակցութայն XII համա-
գումարում այդ նախագիծը վորակեց վորպես Ֆեդե-
րացիա ստեղծելու պրուսական սխտեմ, նկատի ու-
նենալով յունիերական Պրուսիայի՝ հին Բունդեսաու-
տում¹ վայելած արտոնութայունները գերմանական Ֆե-
դերացիայի մյուս անդամների (Բաւարիայի, Վյուր-
տեմբերգի և այլոց) վերաբերմամբ։ Ընկեր Ստալինը
տեմբերգի և այլոց) վերաբերմամբ։ Ընկեր Ստալինը
մերկացրեց նաև դավաճան Բուխարինի մեքենայու-
թյունները, վորը կուսակցութայն XII համագումար-
ում հանդես յեկավ նացիոնալիստների պաշտպանու-
թյամբ։

Ընկեր Ստալինը—Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետութայունների Միութայն կազմակերպիչը—
միաժամանակ նրա Սահմանադրութայնն ստեղծողը

¹ Բունդեսաուտ—միութենական խորհուրդ, վորի մեջ մտնում
էին գերմանական կայսերական միութայն պետութայունների ներ-
կայացուցիչները։ Բունդեսաուտը հանդիսանում էր վորպես յեր-
կրորդ պալատ ռայստադի վերաբերմամբ, վորին ժողովուրդն էր
ընտրում։ Բայտատագի կողմից ընդունված որենքը Բունդեսաուտի

յեղավ, վորը վերջնականապես հաստատվեց Խորհուրդ-ների II Համամիութենական համագումարում 1924 թ. սկզբին:

Միության հետագա աճմանն ու ընդարձակմանը հետևեց ազգերի աճումն ու դարգացումը, նրանց ավելի հաստատուն կազմակերպումն ու ամրապնդումը, վորը պայմանավորեց առանձին ազգությունների անցումն ազգային պետականության մի ձևից դեպի մյուս ձևը: Այսպես, 1924 թվականին կատարվեց խորհրդային Միջին Ասիայի ազգային սահմանազատումը, վորի հետևանքով կազմակերպվեցին Ուզբեկական և Թուրքմենական միութենական հանրապետությունները: 1929 թվականին Միության մեջ մտավ նաև Տաջիկական հանրապետությունը, վորն ավտոնոմ հանրապետությունից վերափոխվեց միութենական հանրապետության:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության անդամների կամավորության սկզբբունքը հաստատվում է նաև նրանով, վոր ամեն միութենական հանրապետության, համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության 17-րդ հոդվածի, իրավունք է վերապահվում ազատ կերպով դուրս գալու ԽՍՀՄ-ից: Ստալինյան Սահմանադրության նախադժի համաժողովրդական քննարկման ժամանակ առաջարկություն յեղավ այս հոդվածը Սահմանադրությունից հանելու այն հիման վրա, վոր չկան այնպիսի հանրապետություններ, վորոնք կամենային դուրս գալ Միությունից: Ընկեր Ստալինը ԽՍՀՄ Խորհուրդների VIII Ար-

հաստատումն էր պահանջում: 1918 թվականի դեբեմբերական հեղափոխությունից հետո Բուենոսայթիս փոխարինեց Ռայսոսատը (կայսերություն միություն), վորը Հիտլերի՝ էլիտանության դուրս անցնելուն պես լուծարվեց յենթարկվեց բուրժուական դեմոկրատիայի ու պառլամենտարիզմի բոլոր մնացորդների հետ միասին:

տակարդ Համագումարում այդ առաջարկությունը դեմ դուրս յեկավ:

«ԽՍՀՄ,—ասաց ընկեր Ստալինը,—իրավահավասար միութենական հանրապետությունների կամավոր միություն է: Սահմանադրությունից հանել ԽՍՀ Միությունից ազատորեն դուրս գալու իրավունքի վերաբերյալ հոդվածը, նշանակում է խախտել այդ միության կամավոր բնույթը: Կարո՞ղ ենք մենք դիմել այդ քայլին: Յես կարծում եմ, վոր մենք չենք կարող և չպետք է դիմենք այդ քայլին: Ասում են, վոր ԽՍՀ Միության մեջ չկա վոչ մի հանրապետություն, վորը ցանկանար դուրս գալ ԽՍՀՄ կազմից, վոր այդ նկատառումով 17-րդ հոդվածը գործնական նշանակություն չունի: Վոր մեզ մոտ չկա վոչ մի հանրապետություն, վորը ցանկանար դուրս գալ ԽՍՀՄ կազմից, այդ, իհարկե, ճիշտ է: Բայց դրանից բնավ չի հետևում, վոր մենք Սահմանադրության մեջ չպետք է Ֆիլքսացիայի յենթարկենք Միութենական հանրապետությունների իրավունքը՝ ազատորեն դուրս գալու ԽՍՀՄ-ից»¹:

Կարո՞ղ է արդյոք միության կամավորության մասին խոսք լինել բուրժուական միութենական հանրապետություններում:

Նախ, բուրժուական միութենական պետությունները՝ դրանք վոչ թե ժողովուրդների միություն են, այլ վարչական-տերիտորիալ մարզերի միություն են, յերկրորդ՝ այդ վարչական-տերիտորիալ մարզերը միավորվել են բնավ վոչ «բարի կամքի» պատճառով, ինչպես այդ մասին գրում են բուրժուական զաղափարախոսները: Այս հանգամանքը, ինչպես վերևում արդեն մասնանշեցինք, հաստատվում է առավել դե-

¹ Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախադժի մասին, էջ 34, Հայկուհրատ, 1936 թ., էջ 48:

մոկրատական բուրժուական միութենական հանրապետությունների պատմությամբ (Շվեյցարիա, ԱՄՆ) :

Մինչև ԱՄՆ ծնունդ առնելը առանձին նահանգներն անգլիական գաղութներ էին: Անգլիայի ճնշման դեմ մղվող կռիվը XVIII դարի վերջին քառորդում հասցրեց անկախ միութենական պետության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ստեղծմանը: Այդ պետության միութենական ձևը նրանով էր պայմանավորված, վոր զանազան նահանգները բուրժուազիայի մոտ՝ Անգլիայի դեմ մղվող կռիվ ընդհանուր շահերի հետ մեկտեղ գոյություն ունեյին հակասություններ միմյանց միջև (առևտրական ու արդյունաբերական ծովամերձ կենտրոնների բուրժուազիայի միջև ու ագրարային-սլավոնատտորական հարավի բուրժուազիայի միջև), այդ պատճառով ամեն նահանգի բուրժուազիան ձգտում էր պետության միութենական ձևի միջոցով գեթ վորոշ չափով իշխանություն ու ազդեցություն պահպանել իր նահանգում:

Սակայն ինչպես ԱՄՆ կազմակերպման ժամանակ (1787 թ.), այնպես էլ այժմ, այդ պետությունը շահագործող դասակարգերի գործիքն է հանդիսացել ու հանդիսանում: Նա պահպանում է աշխատավորների կապիտալիստական շահագործման սխեման:

ՈՍՀՄ սոցիալիստական պետությունը գործիք է մարդուն մարդու կողմից կատարվող ամեն տեսակ շահագործումից ազատելու և ժողովուրդների միջև միասին սոցիալիզմ կառուցելու հիման վրա բարեկամություն ստեղծելու համար: Ուստի խորհրդային միութենական պետությունը կառուցված է ժողովուրդների ազգային-պետական գոյացումների սկզբունքով, այն ժողովուրդների, վորոնց սոցիալիստական Մեծ հեղափոխությունն է ազատագրել:

Բուրժուական միութենական պետությունը պաշտ-

պանում է «վեհապետական» (այսինքն՝ տիրապետող) ազգերի տիրապետող դասակարգի շահերը: Ազգային հարցը վոր մի արտահայտությունն էր դառնում բուրժուական միութենական պետությունների պետական կառուցվածքում:

Սորհրդային միութենական պետության կառավարման սկզբունքները բղխում են սոցիալիստական դեմոկրատիայի խնդիրներից, աշխատավորների ամենալայն մասսաներին պետության կառավարման գործի ասպարեղ ներդրավելու ձգտումից: Ուստի պետական կառավարման ապարատը բնիկայնացված է, այսինքն՝ բաղկացած է հենց այն ազգությունների ներկայացուցիչներից, վորոնք, լավ իմանալով իրենց ազգության կենցաղն ու կարիքները, ծավալում են սոցիալիստական դեմոկրատիա, բնակչության ամենալայն մասսաներին քաջում են խորհրդային պետության կառավարման և սոցիալիզմի շինարարության ասպարեզ:

Բնիկայնացումը—դա խորհրդային սոցիալիստական դեմոկրատիայի բաղկացուցիչ մասն է: Դա մեկնույն ժամանակ՝ պետական ապարատի վերաբերմամբ մասսաների կողմից կատարվող մշտական դեմոկրատական վերահսկողության պայմաններից մեկն է:

«... հարազատ դառնալու համար,—գրել է ընկեր Ստալինը,—խորհրդային իշխանությունը ամենից առաջ պետք է հասկանալի դառնա նրանց համար: Ուստի անհրաժեշտ է, վոր խորհրդային բոլոր մարմինները ծայրամասերում,—դատարանը, աղմինիստրատիան, անտեսության մարմինները, անմիջական իշխանության մարմինները (նույնպես և կուսակցության մարմինները) ըստ հնարավորին կազմվեն տեղացիներից, վորոնք զիտեն տեղական բնակչության կենցաղը, բարքերը, սովորությունները, լեզուն, վոր դեպի այդ ինստիտուտները գրավվեն տեղաբնակ ժողովրդա-

ե, —ասել է ընկեր Ստալինը կուսակցութեան X համագումարում, —վոր վոչնչացնենք ազգութունների այն հետամնացութիւնը (տնտեսական, քաղաքական, կուլտուրական); վորը մենք ժառանգել ենք անցյալից, վոր հետամնաց ժողովուրդներին հնարավորութիւն տանք կենտրոնական Ռուսաստանին հասնելու՝ թե՛ պետական, թե՛ կուլտուրական և թե՛ տնտեսական տեսակետներից»¹:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութիւնը հռչակեց «Ռուսաստանի ժողովուրդների հաւասարութիւնն ու սուվերենութիւնը»:

Ժողովուրդների հաւասարութիւնը՝ հաղթանակած բանվոր դասակարգի և կամավորապես նրա շուրջը համախմբված՝ նախկին ճնշված ազգերի աշխատավորների մեծագույն նվաճումը հանդիսացավ:

Բոլոր ազգերը, —անկախ այն բանից՝ արդյոք նրանք համախմբված են միութենակա՞ն թե ավտոնոմ հանրապետութիւններում, կամ ավտոնոմ մարզերում, կամ ազգային ոկրուգներում, —իրավահաւասար են: Բայց, ինչպես նշել է ընկեր Ստալինը կուսակցութեան XII համագումարում, «իրավական հաւասարութիւն մենք հռչակել ենք և կիրառում ենք, բայց իրավական հաւասարութիւնից, վորն ըստինքյան մեծագույն նշանակութիւն ունի խորհրդային հանրապետութիւնների զարգացման պատմութեան մեջ, մինչև փաստական հաւասարութիւնը, — այնուամենայնիւ հեռու յե»²:

Փաստական հաւասարութիւնը՝ դա նախկին հետամնաց ժողովուրդների վո՛չ միայն քաղաքական,

1 Ստալին, Մարքսիզմը և ազգային-դաշուժային հարցը, էջ 76, Հայկուսհրատ, 1935 թ., էջ 107:

2 Ստալին, Մարքսիզմը և ազգային-դաշուժային հարցը, էջ 117, Հայկուսհրատ, 1935 թ., էջ 160:

այլև տնտեսական ու կուլտուրական հաւասարութիւնն է առաջավոր ժողովուրդների հետ: Ազգային հաւասարութիւնը կմնար վորպես դատարկ հնչյուն, յեթե կուսակցութիւնը և խորհրդային իշխանութիւնը արոցկիսաների, բուխարինականների, նացիոնալիստների և մյուսների դեմ մղած դասակարգային պայքարում չձգտէին փաստական հաւասարութեան համար հաստատուն հիմք ստեղծելու:

Բավական չէր, որինակ, միայն հռչակումն այն սկզբունքի, վոր կինը իրավունքներով լիովին հաւասարեցված է տղամարդու հետ: Պետք էր տնտեսապես ու կուլտուրապես էլ զինել կնոջը: Պետք էր նրան վերակալորում տալ, նրան սոցիալիստական արտադրութեան մեջ ներգրավել, վորպեսզի նա իրոք կարողանար ոգտագործել իրեն վերապահված քաղաքական հաւասարութիւնը:

Ազգային հաւասարութեան գործն էլ նույնպես էր: Նախկին հետամնաց ժողովուրդների փաստական հաւասարութիւնն իրագործվում է բանվոր դասահաւասարութիւնն իրագործվող նրանց ակտիվ ոգնուկարգի դիկտատուրայի կողմից նրանց ակտիվ ոգնութիւն ցույց տալով: Խորհրդային միութենական պեթիւն հետամնաց ժողովուրդների եկոնոմիկան և կուլկին հետամնաց ժողովուրդների եկոնոմիկան և կուլտուրան բարձրացնելու համար: Առաջներում մինչևատուրան նահապետական պայմաններում պիտալիստական, նահապետական պայմաններում դանվող ժողովուրդները բանվոր դասակարգի դիկտատուրայի աջակցութեամբ հնարավորութիւն ստացան վտոք դնելու անմիջապես սոցիալիստական զարգացման ուղին, շրջանցելով կապիտալիզմը:

Մամեն ազգի զարգացումը հիմնված է հաստատուն Ամեն ազգի զարգացումը հիմնված է հաստատուն նյութական բաղայի վրա, վորը սոցիալիստական եկոնոմիկան է նրա համար պատրաստել: Մի շարք ազգային հանրապետութիւններ (Ուզբեկստան, Տաջիկստան)

Հսկայական են գյուղատնտեսութեան մեջ ձեռք բերված նվաճումները: Գյուղացիական տնտեսութեան մաս 92%-ը համախմբված է յերկու հազար կոլտնտեսութեաններում: Միայն 55 ՄՏԿ ունեն մոտավորապես 4 հազար տրակտոր, 500 կոմբայն և բազմաթիվ գյուղատնտեսական ուրիշ բարդ մեքենաներ: Բամբակի ցանքի տարածութեանը նախապատերազմականի համեմատութեամբ ավելացել է 3 անգամով: Բամբակի բերքատվութեանը 1932 թվականին կազմում էր 6,7 ցենտներ՝ մի հեկտարից, իսկ 1937 թվականին—14,58 ցենտներ՝ մի հեկտարից: Շաքարի ձակնդեղի բերքատվութեանը նույն ժամանակաշրջանում բարձրացել է 70,9 ցենտներից մինչև 337 ցենտների: Առանձին ստախանովականները ստացել են ռեկորդային բերքեր: Այսպես, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավոր ընկ. Տեղիկբայելը ստացել է մինչև 1200 ցենտներ՝ մի հեկտարից:

Վերջին տարիներում անշեղորեն աճում է նաև անասնաբուծութեանը. յերեք տարում (1935—1938) անասունների քանակն ավելացել է 73%-ով: Անասունների ամբողջ քանակի 90%-ից ավելին պատկանում է կոլտնտեսութեաններին, խորհրդատեսութեաններին և կոլտնտեսականներին: Մասաները տիրապետում են անասնաբուծութեան տեխնիկային: Այդ բարձրացնում է կոլտնտեսութեանների և ամեն մի առանձին կոլտնտեսականի բարեկեցութեանը:

«Յես,—պատմում էր ընկ. Դեհկանովը անասնապահութեան առաջավորների խորհրդակցութեանը կուսակցութեան ու կառավարութեան ղեկավարների հետ,—ինքս նախկին բատրակ եմ, տասնութ տարի տառապալից կյանք եմ վարել Ալիմբեկ բայի մոտ: Իսկ այժմ արդեն յերկու տարի յե, վոր աշխատում եմ վորպես կոլտնտեսութեան Փերմայի վարիչ: Մեր

կոլտնտեսականները ապրում են ունեւոր և կուլտուրական կյանքով: Բոլոր կոլտնտեսականներն ապահովված են սեփական տներով: Մեզ մոտ էր անասունը չունեցող կոլտնտեսական չկա: Մեզ մոտ ամեն մի կոլտնտեսական ունի 2—3-ական կով, 10—15-ական շուլի մանր անասուն՝ վոչխար, այծ: Մեր հանրապետութեան մեջ կա այնպիսի կոլտնտեսական—ընկեր Տուրգուկեյել, վորը էր անձնական գործածութեան համար ունի 141 վոչխար, 10 ձի, 5 գլուխ խոշոր յեղհարավոր անասուն: Այդպիսի կոլտնտեսականներ քիչ չեն»¹:

Կիրգիզիայում այժմ կա 1.547 տարրական դպրոց, 204 վոչ-լիվ միջնակարգ դպրոց, 35 միջնակարգ դպրոց, վորոնց սովորողների թիվն է 257 հազմարդ, այսինքն համարյա 37 անգամ ավելի, քան մինչև հեղափոխութեանը: Բացի այդ ստեղծվել են բուհեր՝ մանկավարժական, գոտիտերինար, կազմակերպչական և բժշկական բուհ: Կան 13 տեխնիկում և մանվում է բժշկական բուհ: Ստեղծվել է յերաժըկավարժական ուսումնարան: Ստեղծվել է յերաժըկական-գրամատիկական թատրոն Ֆրունզեյում, տական-գրամատիկական թատրոն, ռուսական թատրոն Ոչում, 11 ռայոնական թատրոն, պատանի հանդիսատեսի գրամատիկական թատրոն, պատանի Ֆիլհարմոնիա: Կիրթատրոն: Ստեղծվում է պետական Ֆիլհարմոնիա: Կիրգիզիայում մայրենի լեզվով լույս է տեսնում և այլ գրառութու ժուռնալ, աճում է գեղարվեստական և այլ գրականութեան թողարկումը: Կիրգիզիան այժմ ունի սեփական հազարավոր ուսուցիչներ, հարյուրավոր ինվական հազարավոր ուսուցիչներ, հարյուրավոր ինվական հազարավոր գիտական աշխատողներ և ժեներներ, ագրոտոմներ, գիտական աշխատողներ և այլն:

Ընդամին հարկավոր է նշել Կիրգիզիայում նաև

1 Անասնապահութեան առաջավորների խորհրդակցութեանը կուսակցութեան ու կառավարութեան ղեկավարների հետ, էջ 328, Կուսհրատ, 1936 թ.:

ազգային փոքրամասնութիւնների ապահովված լինելը: Բացի կիրգիզական ու ուսսական դպրոցները, քանակով մեծանում են ուլդուրական, կարմիկական, դունգանական և այլ դպրոցները:

Մրանք են այն փոփոխութիւնները, վոր սոցիալիստական հեղափոխութիւնը մտցրել է անցյալում ամենից ավելի ստրկացած և հետամնաց դադութիւններից մեկի մեջ:

Խորհրդային շինարարութեան բնադաւառում մեծացող խնդիրների կապակցութեամբ փոփոխվել է նաև Կիրգիզիայի պետական ձևը: 1924 թ. ստեղծվեց Կիրգիզական ավտոնոմ մարզը, 1926 թ. Կիրգիզիան փոխակերպվեց ավտոնոմ հանրապետութեան: 1936 թ. Կիրգիզիան միութենական հանրապետութիւն է, խորհրդային Փորպոստ Արևելքում, վորը դեպի իրեն է գրավում սահմանի այն կողմը գտնվող բոլոր հարևան ժողովուրդների ուշադրութիւնը:

* * *

Մեր անծայրածիր յերկրի բոլոր ժողովուրդները այժմ վերածնունդ և ծաղկում են ապրում, վորպիսին առաջ չի յեղել և չեր ել կարող լինել նրանց պատմութեան մեջ: Այսպես անցյալում հետամնաց ժողովուրդները բանվոր դասակարգի ղեկատարայի աջակցութեամբ հասնում են Միութեան առաջավոր կենտրոնական ուսյոնների բնակչութեանը:

Տրոցկիստները, աջերը, նացիոնալիստները, ինչպես հայտնի յե, կատաղի պայքար եյին մղում սոցիալիստական ինդուստրացման ու կոլեկտիւացման դեմ: Ժողովրդի այդ թշնամիները դրանով իսկ փորձում էյին վիժեցնել նաև ազգութիւնների հալասարութեան հիմքը: Ֆաշիզմի այդ ստոր գործակալների ջախջախումը դեռ առաջին հնդամյակները կաղմելիս նպաստեց

տեց առաջները հետամնաց բոլոր ազգութիւնների և նրանց ազգային-պետական գոյացումների ավելի աւազ աճմանը:

Բոլոր ժողովուրդները գիտակցում են, վոր թույլ ու հետամնաց ժողովուրդները համար ԽՍՀՄ-ից դուրս չկա և չի կարող հալասարութիւն լինել: Այս մասին խոսում է Հարեչստանի բախտը, վորին ստրկացրել է իտալական Ֆաշիզմը, Չինաստանի բախտը, վորին պատառ-պատառ են անում ճապոնական իմպերիալիստական զիչատիչները, Ավստրիայի բախտը, վորը գրավել է և վորին ճնշում է գերմանական Ֆաշիզմը:

«Արդեն այս ե—ստում եր ընկեր Ստալինը—չահագործողների որենքը—խփել հետամնացներին ու թույլերին: Կապիտալիզմի դայլային որենքը: Դու հետ ես մնացել, դու թույլ ես—նշանակում է՝ դու իրավացի մնացել, ասել է՝ քեզ կարելի յե հարվածել ու ստրկացնել»¹:

Այդ վերաբերում է նաև բուրժուա-դեմոկրատական յերկրներին, ինչպես որինակ ԱՄՆ:

ԱՄՆ բուրժուազիան, վորը պայքարում եր իր ազգային անկախութեան համար ընդդեմ Անգլիայի, միաժամանակ պահպանում եր ստրկութիւնը: Չնայած վոր ստրկութիւնը 1861—1865 թ. թ. քաղաքացիական պատերազմից հետո վերացվեց, նեղրերը մինչև այժմ, մանավանդ հարավային նահանգներում, չեն ոգտվում սպիտակների հետ հալասար իրավունքներով: 1870 թ. ընդունվեց ԱՄՆ սահմանադրութեան (XV), վորն ասում է. «Միավերաբերյալ մի ուղղում (XV), վորն ասում է. «Միացյալ Նահանգները ընտրութիւններին մասնակցեցյալ Նահանգները ընտրութիւնները կամ առանձին յու իրավունքը Միացյալ Նահանգները կամ սահմանափակեն նահանգները չպիտի բացառեն կամ սահմանափակեն

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 445, հայ. հրատ., 1937 թ., էջ 658:

և իբրև առաջավոր քաղաքակրթութիւնը վոչ պակաս ,
քան յեվրոպական ժողովուրդները»¹ :

Այս պատմական հաղթանակները առաջ են բերում սոցիալիզմ կառուցող խորհրդային մեր բոլոր ժողովուրդների հպարտութիւնը : Միայն ԽՍՀՄ՝ բանավոր դասակարգի դիկտատուրայի պետութիւնը կարող էր վճռական հարված հասցնել ազգութիւնների առաջվա հետամնացութեանը, վերացնել առաջվա ազգային յերկպառակութիւնը և ժողովուրդների միջև յեղած թշնամութիւնը, նրանց համախմբել միասնական նպատակով ու կամքով, առաջ բերել նրանց ստեղծագործական խանդավառութիւնը և տեմպերով չտեսնված նվաճումներ ցույց տալ մեր խորհրդային իրականութեան բոլոր բնագավառներում :

¹ Մտային, Մարքսիզմը և ազգային-դազութային հարցը, Էջ 189—190, հայ. հրատ., 1935 թ., էջ 257—258 :

ԽՍՀՄ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՉԵՎԵՐԸ

Ազգութիւնների պետական կառուցվածքի ձևերը տարբեր են՝ նայած ամեն մի ժողովրդի կամ խորհրդային մեկ հանրապետութեան սահմաններում միացած ժողովուրդների խմբի կյանքի պայմաններին : Պետական այդ բոլոր ձևերը ճկուն են, հեշտութեամբ լուծում են մի ձևից մյուսին, ավտոնոմ մարզից ավտոնոմ հանրապետութեան, ավտոնոմ հանրապետութեան անցնելը : Թիւրքից միութենական հանրապետութեան անցնելը : Այդ բոլոր ձևերը միաժամանակ բանավոր դասակարգի դիկտատուրայի ազգային ձևն են, վորը տեղական պայմաններին հարմարվելով՝ ազգութիւնների պետական կառուցվածքի այս կամ այն ձևը կիրառում են, վորպեսզի դաստիարակի, սովորեցնի և պետուե, վորպեսզի կառուցվածքի կառավարելու գործի մեջ թիւրքն ու արտադրութիւնը կառավարելու գործի մեջ ներգրավի ազգութիւնների աշխատավորների մելլոները բարձրացնելու նպատակով, նրանց պայքարի բարձրացնելու այդ նպատակով մասնակցելու նպատակով, նրանց ինտեղնացիոնալ շփման ամուր հիմքը :

Ի՞նչ է ներկայացնում պետական այդ ձևերից ամեն մեկը :

Մտային սահմանադրութիւնը 13-րդ հոդվա-

Ճամ Երեւան Ե քննարկում ԽՍՀՄ պետական կառուց-
վածքը.

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միությունը միութենական պետություն
է՝ կազմված իրավահավասար Խորհրդային Սոցիալիս-
տական Հանրապետություններից կամավոր միավոր-
ման հիմունքով».

Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիա-
լիստական Հանրապետություն.

Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետություն.

Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետություն.

Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետություն.

Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետություն.

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետություն.

Թուրքմենական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետություն.

Ուզբեկական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետություն.

Տաջիկական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետություն.

Ղազախական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետություն.

Կիրգիզական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետություն»:

Այսպիսով Խորհրդային միութենական պետու-
թյունը միավորում է 11 միութենական խորհրդային
սոցիալիստական հանրապետություն:

Խորհուրդների VIII Համամիութենական Արտա-

կարգ համադրումարում ընկեր Ստալինը մատնանշեց
յերեք հատկանիշ, վորոնք հիմք են ծառայել գոյու-
թյուն ունեցող միութենական հանրապետությունները
կազմելու համար:

«Նախ,—ասում եր ընկեր Ստալինը,—անհրաժեշտ
է, վորպեսզի հանրապետությունը ծայրերկրային լի-
նի, ամեն կողմից շրջապատված չլինի ԽՍՀՄ տերի-
տորիայով: Ինչո՞ւ: Վորովհետեւ յետ միութենական
հանրապետությանն իրավունք է վերապահվում դուրս
հանրապետությունից, ասպ անհրաժեշտ է, վոր
գալու ԽՍՀ Միությունից, ասպ անհրաժեշտ է, վոր
Միութենական դարձած այդ հանրապետությունը
Միութենական ունենա տրամաբանորեն ու փաս-
տորեն հարց դնել ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին...»

Յերկրորդ, անհրաժեշտ է, վորպեսզի այն ազգու-
թյունը, վոր խորհրդային հանրապետությանն իր ա-
նունն է տվել, քիչ թե շատ կոմպակտ մեծամասնու-
նունն է տվել, քիչ թե շատ կոմպակտ մեծամասնու-
թյուն ներկայացնի հանրապետության մեջ...»

Յերրորդ, անհրաժեշտ է, վոր հանրապետությու-
նը շատ ել փոքր չլինի իր բնակչության քանակի ի-
մասով, վորպեսզի նա ունենա, ասենք, վոչ պա-
մաստով, վորպեսզի նա մի միլիոնից ավելի բնակչու-
թյուն է: Կաս, այլ դո՞նե մի միլիոնից ավելի բնակչու-
թյուն է: Ստալինյան Սահմանադրության 15-րդ հոդվածը

մատնանշում է, վոր միութենական հանրապետու-
թյունները իրավունքները սահմանափակված են
«միայն ԽՍՀՄ Սահմանադրության 14-րդ հոդվածում
մատնանշված շրջանակներով»:

Ինչի՞ մասին է խոսում Ստալինյան Սահմանա-
դրության 14-րդ հոդվածը: Այդ հոդվածը խոսում է,
նախ՝ այն մասին, վոր Միության իրավասությանը,
հանձնիս նրա իշխանության ու կառավարման բարձ-
րագույն մարմինների, յենթակա յեն պաշտպանության
և այլ պետությունների հետ յեղած հարաբերություն-
ները հարցերը: Այս հարցերին վերաբերում են՝ պա-

